№ 232 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24

1906

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24 № 232

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ“

Լրագիրը արժէ 2 րուբլի: Մի ամսվանը 1 րուբլի:

Հայկանուշ, Յովսէփ և Վասիլ Պարսամեանցները. Ջաւահիր և Եգօր Բաղդասարեանցները և Սարգիս Խօյեցեանց ցաւօք սրտի յայտնում են առաջինը՝ իր թանկագին ամուսնու, երկրորդը հօր, երրորդը՝ և չորրորդը՝ եղբօր, հինգերորդն աներորդու և վեցերորդը փեսայի՝

ՍԻՄԷՕՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆՑԻ

մահը՝ որ տեղի ունեցաւ ամսիս 23-ին: Յուղարկաւորութիւնը կը լինի Միքայէլեան հիւանդանոցից զէպի Կուկիայի Թանդոյեան եկեղեցին, (Միքայէլեան փողոց) ամսիս 24-ին, երեքշաբթի, առաւօտեան ժամը 10-ին. Թաղումը Խօջիվանքում:

(ե.) 1—1

„Ա. ՓՐԻԴՕՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

սրանով յայտարարում է, որ պետական երրորդ կարգի խաղարկութեան տոմսակները, այս 1906 թ. նոյեմբերի մէկի տիրաժից, ամեն մէկ տոմսակն

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ Է

2 րուբ. 70 կոպէկով,

բացի մարկայի գնից: Գրասենեակը հեռագրով կամ վերադիր վճարով տոմսակներ չէ ապահովագրում: առ. (20, 24, 27) 2—3

Կիրակի, հոկտեմբերի 29-ին,

Առաւօտեան ժամը 10-ին, կը կայանայ յուլիսի 30-ին կայացած

Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան

բաժնետէրերի արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը, ի նկատի ունենալով քննվելիք հարցերի կարևորութիւնը, խնդրում են պ. պ. բաժնետէրերին անպատճառ շնորհ բերել:

(ե. հ. շ.) առ. 1—3

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ արդէն ստացված է «ԳԵՂՈՒՆԻՆ»: Առ այժմ ստացված են 300 օրինակ: Բոլոր 1000 օրինակներից գոյացած արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների: Ցանկացողները՝ ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ դաշինքի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն՝ ուղարկելով գինը 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կ., դիմելով կամ «Մշակի» խմբագրատունը, Յանձնաժողովի անդամ-քարտուղար [illegible] տենբերգ» գրավաճառանոցը կամ «Երկրի» խմբագրատուն, իսկ ԲԱԳՈՒՈՒՄ ցանկացողները կարող են ստանալ Թ. Բունեաթեանի գրախանութից, հայոց եկեղեցուն կից:

առ. 3—5

ԼԱԿՏՕԲԱՑԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՕՖ. ՄԵՉՆԻԿՕՎԻ

Ցուցմունքների համաձայն պատրաստվում է

ՊՐՕՎԻԶՕՐ

Ա. Ս. ԿԼԵԲԱՆՍԿՈՒ

Միքրօ-բակտերիօլօգիական կաբինետում, Վօրօնցովի արձանի դիմաց:

Հեռախօս № 389.

(ե. չ. հ. ու. կ.) առ. յ. կ. 1—10

ԲԺԻՇԿ

Տ. Իսախանեան

վերադարձել է արտասահմանից ու վերսկսել հիւանդների ընդունելութիւնը:

Սերգիեվսկայա փող. Փրիդոնովի տուն № 15.

(ե. հ. շ.) առ. 1—3

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը

յայտնում է, որ այս հոկտեմբերի 27-ին բացվում է քաղաքային ծննդաբերութեան ապաստարանում ծննդկանների ընդունելութիւնը: Ապաստարանը գտնվում է Հաւլաբարում, Մետեխսկի փողոցի վրա, Խաչատուրօվի տանը:

առ. 2—2

ՀԱՒԼԱԲԱՐ

ԲԺԻՇԿ

Ա. Ա. ՄՕՆՍԷ

Ընդունում է 12—1 ժամը, երեխայական և ներքին հիւանդութիւններ ունեցողներին: Махатская ул. № 2. (Ռօզովայա հրապարակին կից).

առ. 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Տեղափոխվեց Միքայէլեան փողոց № 27.

Ընդունելութիւն ներքին և ջղային հիւանդութիւնների. առաւօտեան 9—11 ժ. երեկոյեան 5—7 ժամը:

առ 4—5

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ“

հումոր, սատիրիկ-սիմվօլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

IV-րդ համարը,

մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն V-րդ համարի հետ նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. գեղարուեստական բաց նամակների I սերիան

Բաժնեգինն է պրէմիաներով 2 րուբ., իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.:

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն

ե. շ. առ. 5—25

1906 թ-ի յուլիսի վերջերին Թիֆլիսում

ԿՈՐԵԼ ԵՆ

տասն հազար րուբլու մուրհակների չը գրուած պրօշմաթղթեր. միայն նրանց մէւս երեսում մակագրած է կալուածատէր ազնուական

Ալէքսանդր Պետրովիչ Մուրոմցեվ:

Յիշեալ մուրհակների տէր իշխանուհի Մարիա Ալէքսանդրօվնա Կրոպոտկինա սրանով խնդրում է անվաւեր և անարժէք համարել այդ մուրհակները:

առ. (կ. ե. հ.) 3—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
և
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Վ. Ս. ՋՄՇԿԵԱՆԻ

Մնում է իր հին բնակարանում Архивный переулокъ, Յակոբեանի տուն № 22: Ընդունում է երկու սեռի երեխաների 4 տարեկան հասակից և պատրաստում միջնակարգ դպրոցների փոքր դասարանների համար:

առ (ե. հ. կ.) 10—10

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգոյ հասարակութեան, որ կարճ միջոցով մնում եմ Թիֆլիս քաղաքում, «Վերսալ» հիւրանոցում, Վօրօնցովի արձանի մօտ, համար 4—5:

ՀԻՐՕՄԱՆՏԻԿ

Տիկին Անաստասիա Իւլիեվնա ԿՕՆՍՏԱՆՏԻՆԻԴԻ

Գուշակում է ձեռքի ափի գծերով մարդուս բաղդաւորութիւնը և նոյնպէս գուշակում է անսխալ կերպով մարդուս անցեալը, ներկան և ապագան: Հռչակաւոր ընդունելութիւն է գտել արտասահմանի և Ռուսաստանի զանազան մեծ քաղաքներում:

Ընդունում է ամեն օր, առաւօտեան ժամի 9-ից մինչև 1-ը և 3-ից մինչև 6-ը:

Սէանսի վճարը 1 ր. այցելողից, իսկ ուսանողներից 50 կոպէկ:

առ. (կ. ե. հ. շ.) 2—4

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան

վարչութիւնը, ի նկատի ունենալով որբանոցի շուտափոյթ բացման անհրաժեշտութիւնը՝ խնդրում է հայ հասարակութեանը չը զլանալ իր անյապաղ օգնութիւնը: Նուիրատուները և անդամ գրվել ցանկացողները կարող են դիմել երեքշաբթի, շաբաթ և կիրակի օրերը, ժամը 10-ից մինչև 2-ը հետևեալ հասցեով. Բէհբութ. փող. տ. № 33, նախագահուհի օր. Ս. Բայտողլեանին: Իսկ նուիրատուութիւն ընդունում են «Երկիր», «Մշակ» և «Т. Г.» թերթերը:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, հոկտեմբերի 24-ին
Հայ Դրամատիկ Ընկերութեան խումբը
Անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար

կը ներկայացնէ

Տասն եւ եօթ տարեկաններ

Պիես 5 արար., Դրէյերի, Թարգմ. Գ. Տէր-Միրաքեանի

Սկիզբն է երեկոյեան ժամը ճիշտ $7^1/_2$-ին:

Տեղերի գները 1 ր. մինչև 30 կոպ.:

Հիւրերը, անդամների երաշխաւորութեամբ, ամեն մի տոմսակին վճարում են մի րուբլի աւ.

Ուսանողներին չէ թոյլատրվում:

Ներկայացման վերջը

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ռէժիսսեօր Յ. ԱԲԵԼԵԱՆ

առ. (կ. ե.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր բնակութիւններ հաստատելը. Վերջին տեղեկութիւններ. Լէօի նամակագրութեան առիթով. Զինված յարձակում Պետերբուրգում. Նոր մերկացումներ. Զրկվածին հեշտ է զրկելը. Մի քանի խօսք նորատի մայրերին, «Դիֆայի». Հ. Մանուէլ վ. Մաշուրեան. Ծխական դպրոց. Գիւղատնտեսական դպրոցների կարևորութիւնը մեզանում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՐ ԲՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼԸ

I

Թէ ինչ վերջնական ձև կը ստանայ հողային ռէֆօրմը, այդ մենք կը տեսնենք, երբ նորից կը բացվի Պետական Դուման և կը քննէ հողային բարեկարգութեան խնդիրները:

Մենք նուիրել ենք հողային խնդիրների պարզաբանելուն մի շարք յօդուածներ և դեռ շատ առիթներ կունենանք խօսելու այդ խնդիրների մասին և լուսաբանելու մեր հայեցակէտները:

Այսօր մենք հնարաւորութիւն ունենք կանգ առնել մի կէտի վրա, որ կարող է մեր երկրի մի քանի տեղերի համար մեծ նշանակութիւն ունենալ:

Դա նոր գիւղեր հաստատելու խնդիրն է:

Որքան էլ պարզ և հասարակ թուայ այն բանը, որ գիւղացիները պէտք է լիակատար իրաւունք ունենան նոր գիւղեր հաստատելու երբ և որտեղ ցանկանան, այնուամենայնիւ գործնական կեանքի մէջ այդպիսի ցանկութիւններ և որոշումներ կատար ածելու համար ասպարէզ են գալիս մի շարք դժուարութիւններ, որոնք խոչընդոտ են հանդիսանում գիւղացիների առաջ:

II

Կասենք աւելին: Վարչութիւնը իրան իրաւունք է համարում նոր կազմված գիւղը ցրել և գիւղացիներին վերադարձնել իրանց նախկին տեղերը:

Մինչդեռ յաճախ, շատ յաճախ գործնական պահանջ է զգացվում նոր գիւղ հաստատել թէ նախկին գիւղական հողերի այս ու այն ծայրում և թէ նոր հողերի վրա:

Եթէ ամեն տեսակ արգելքներ և խոչընդոտներ վերանան այս գործից, այն ժամանակ գիւղացիները իրանց ազատ կը զգան իրանց գործառնութիւնների մէջ և կարող կը լինեն զետեղել իրանց գիւղերը այնպէս, ինչպէս աւելի յարմար է նրանց գիւղատնտեսական և ուրիշ պէտքերի նկատառմամբ: Այն ժամանակ գուցէ աւելի հեշտ կերպով կը հաստատվեն գիւղեր թէ արքունական ազատ հողերի և թէ կալուածատէրերից գնված հողերի վրա:

Իսկ իրականութեան մէջ մեզ յայտնի են մի շարք դէպքեր, երբ տասնեակ տարիներ գոյութիւն ունեցող գիւղերը համարվում են ապօրինի և իրաւական տեսակէտով գոյութիւն չունեցող:

III

Անկասկած, իւրաքանչիւր գիւղ պէտք է մի տեղ արձանագրված լինի, որպէսզի վարչութիւնը իր յարաբերութիւնների համար, օրինակ՝ հարկեր հաւաքելու, զինւորական անելու, տուրքեր նշանակելու, դատարան կանչելու, ընտրութիւններ անելու ժամանակ, գիտենայ թէ ում հետ գործ ունենայ: Եւ ուրեմն, իւրաքանչիւր նոր գիւղ ինքը պէտք է հոգ տանի, որ նրա գոյութիւնը լինի յայտնի ամենքին: Բայց իրականութեան մէջ մենք տեսնում ենք հակառակը. գիւղացիները նոր բնակութիւն հաստատելու ժամանակ ամենևին չեն զեկուցանում ոչ ոքի և գործում են կարելին չափ գաղտնի:

Եւ հասկանալի է թէ ինչու:

Գիւղացիները, յոյս չունենալով որ վարչութիւնը նրանց թոյլ կը տայ նոր տեղափոխութիւններ անելու, նոր բնակութիւններ հաստատելու, կամ բոլորովին չեն փորձում հաստատել այդ բնակութիւնները և կամ եթէ վճռում են իրագործել իրանց ցանկութիւնը, չեն յայտնում ոչ ոքի և տալիս են իրանց ձեռնարկութեան բոլորովին մասնաւոր կերպարանք:

IV

Իսկ երբ տարածված կը լինի նոր գիւղեր հաստատելու գործը, ձևականութիւնները հասցրած կը լինեն նուազագոյն չափին, կը կրեն միայն հասարակ զեկուցման բնաւորութիւն և վերացված կը լինեն ամեն տեսակ արգելքները, այն ժամանակ թէ նոր գիւղեր հաստատվելը կը սկսի զարգանալ և թէ գիւղերի արձանագրութիւնները կը կատարվեն աւելի բաւարար և գոհացուցիչ [illegible]

Արդարև, այժմ յաճախ միտք է յղացվել և ծրագիրներ են մշակվել այն բանի առիթով, որ գնվեն հողեր և այնտեղ հաստատվեն գիւղեր, բայց միշտ էլ երկիւղ է առաջ եկել, թէ արդեօք այդպիսի մի ձեռնարկութիւն չի հանդիպի խոչընդոտների և վարչական մի շարք արգելքների:

Եւ անշուշտ երբ կայ արգելքի ուրուականը, այն ժամանակ ամեն մի նախաձեռնութիւն խեղդվում է իր օրօրանում և այլևս զարգացում չէ ստանում:

V

Թէ ինչ տեսակ անհեթեթ արգելքներ կարող են հանդէս բերվել տեղական նախաձեռնութիւնը խեղդելու և ոչնչացնելու համար, կարող է ծառայել մի այնպիսի օրինակ, ինչպէս է Գանձակից մինչև Շուշի լեռնային ճանապարհ շինելու ձեռնարկութիւնը:

Մի այդպիսի ձեռնարկութեան կարելի էր միայն համակրել: Կասենք աւելին: Վարչութիւնը պէտք է առանձին խրախուսանքի արժանացնէր այդ օգտաւէտ ձեռնարկութիւնը և իր կողմից նպաստէր ամեն միջոցներով:

Ով կարող է դէմ լինել, որ գաւառական խուլ տեղերում հաղորդակցութիւնը բարւոքվի և շինվեն նոր ու նոր ճանապարհներ:

Տրամաբանութիւնը թելադրում է ասել՝ ոչ ոք:

Եւ սակայն մենք տեսնում ենք, որ մի այդպիսի վերին աստիճանի համակրելի գործ ոչ միայն խրախոյսի չէ արժանանում, այլ ընդհակառակը լուրջ արգելքների է հանդիպում:

Ահա ինչն է ցաւալի:

VI

Եթէ նոյնատեսակ արգելքների հանդիպեցին նոր գիւղեր հաստատելու ծրագիրները, այն ժամանակ ով կը վստահանայ դրամագլուխ ծախսելու և մարդկանց տեղահան անելու նոր բնութիւններ հաստատելու համար:

Նոր գիւղեր հաստատելու համար լիակատար ազատութիւն ունենալու հարցը հերթական մեր հարցերից մէկն է, որին պէտք է կարողանանք ընթացք տալ և նրա համար նպաստաւոր որոշում ձեռք բերել:

Գիւղացիներին իրանց պէտք է թողնել հաստատել իրանց բնակութիւնները այնտեղ, ուր նրանք յարմար կը գտնեն և ուր նրանց տնտեսութիւնը և ուրիշ անհրաժեշտ պահանջները լաւագոյն կերպով ապահովված կը լինեն:

Երբ գործնական կեանքի մէջ այդպիսի կաշկանդումները կը վերանան, նա կը կազմակերպվի այնպէս, ինչպէս աւելի նպատակայարմար է մարդկանց համար:

Ա. Քալանթար

ԼԷՕՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Էջմիածնի Կենտրոնական Ժողովից Թիֆլիս վերադառնալուց յետոյ, Լէօն գրեց ինձ մի նամակ, վերաբերեալ այն յարաբերութիւններին, որ ստեղծվել են նրա և «Մշակի» խմբագրութեան մէջ:

Ես պատասխանեցի նրա նամակի կէտերին և պարզեցի թիւրիմացութիւնները:

Նա նորից ինձ պատասխանեց մի շատ ընդարձակ նամակով, որի մէջ շօշափված էին և մի երկու նոր կէտեր:

Այդ նամակին ես կարճ պատասխանեցի, յայտնելով, որ աւելորդ եմ համարում իմ առաջին նամակի կէտերը և կոչ արի արդարութեան ձայնին:

Դրանով և վերջացաւ մեր նամակագրութիւնը:

Անցաւ ժամանակ և ահա Լէօն մեր նամակագրութիւնը լոյս ընծայեց «Երկիր» լրագրում, իր յաւելուածական վերջաբանով և զանազան ծանօթութիւններով:

Ուշիմ ընթերցողի համար այդ նամակագրութեան մէջ կան բոլոր նիւթերը եզրակացութիւններ անելու և «Մշակի» խմբագրութեան բռնած դիրքի լիովին ազնիւ ու շիտակ լինելը տեսնելու:

Եւ ուրեմն, նոր բացատրութիւնների էական կարևորութիւն չը կայ:

Լէօի դրած սկզբնական և հիմնական հարցերին տրված են պատասխաններ, իսկ երկրորդական և մանաւանդ գրական բնաւորութիւն ունեցող հարցերը միայն լրացուցիչ նշանակութիւն ունեն:

Անշուշտ կարելի էր և այդ հարցերով զբաղվել: Բայց դա մեզ շատ հեռուն կը տանէր:

Նորից, օրինակ, վերադառնալ Կենտրոնական Ժողովի հարցերին և ցոյց տալ թէ ինչու էինք բռնել այս ու այն դիրքը և ինչումն է Լէօի հիմնական սխալը—դա շատ էջեր կը պահանջէր մեզնից. իսկ հաշուի առնել և գնահատել մեր խմբագրութեան գործողներից իւրաքանչիւրի աշխատանքը, դա մի ապերախտ վիճաբանութեան նիւթ կը բանար:

Ի՞նչ պատասխանենք նորից և ինչու համար:

[illegible] 100 րուբլի ամսական և յատուկ վարձատրութիւն (տողին 3 կոպէկ) վերցրած բաժնից դուրս վէպերի և առանձին յօդուածների համար: Ասել ենք և այն, որ եթէ խմբագրատանը աշխատել նրա համար անյարմար է, աշխատէ իր տանը և ուղարկէ յօդուածները: Յայտնի է և այն, որ մենք երբեք արգելք չենք հանդիսացել, որ Լէօն գնայ հանքային ջրեր և ուր անհրաժեշտ է առողջանալու համար: Իսկ երբ նա հարց յարուցեց ազատ աշխատակցութեան մասին, յայտնվեց նրան, որ նա կարող է աշխատել տողավարձի սկզբունքով և կըստանայ նոյն տողագինը:

Լէօին առաջարկված պայմանը «Մշակի» կողմից լաւագոյնն էր, որ կարող էր անել խմբագրութիւնը: «Մշակի» հիմնվելու օրից դեռ ոչ ոքի այդպիսի նպաստաւոր պայմաններ չէին առաջարկված: Եթէ ներկայումս չէ կարելի աւելին անել, մի՞թէ խմբագրութիւնը մեղաւոր է: Խմբագրութեան անդամներից իւրաքանչիւրը և նրանց հետ ես խմբագիրս անկասկած ուրախութեամբ կը ցանկայինք այնպիսի պայմանով գործել, ինչպէս առաջարկված է Լէօին:

Տողավարձի չափի մասին Լէօն ասում է, որ այդ պայմանը եթէ լաւ է, թող ինձ՝ Քալանթարիս համար լինի: Ես համաձայն եմ: Թող Լէօն վերցնէ մատիտը և հաշուէ ներկայ յունվարի մէկից գրած իմ յօդուածները և կը տեսնէ, որ ես տողավարձով կը հանէի իմ ռոճկի 80%: Իսկ ինչ է արդեօք սահմանում նա այն տաժանակիր աշխատանքի համար, որ ունի «Մշակի» խմբագիրը:

Եւ այդպէս խմբագրութիւնը առաջարկում է Լէօին ամենալաւ պայմանը, որ նա հնարաւորութիւն ունէր առաջարկելու: Եւ անկասկած, այդ է այն գլխաւոր բարոյական հիմունքներից մէկը, որը դրդում է մեզ կոչ անել խղճի և արդարութեան մոռացված ձայնին: Եւ հարցը ի հարկէ սպառված է: Բայց մեզ հրաւիրում են նոր վէճերով զբաղվել:

Մենք մտադիր չենք սակայն շարունակել այս վէճը:

Եւ ահա ինչու:

Առաջին՝ այն պատճառով, որ հարցը բոլորովին պարզված է շիտակ և ուշիմ մարդկանց համար և որ իր հետաքրքրութիւնը նրանց համար սպառված է, իսկ երկրորդ, որ վէճով հետաքրքրվողները—բոլորովին ուրիշ նպատակներ ունեն և ամենևին չեն որոնում ճշմարտութիւնը: Նրանք ցանկանում են, որ մեր վէճը լինի անվերջ, կարելին չափ սուր, վիրաւորական և աղմկալի: Եւ մեծ յոյսեր էլ են տածում, որ այդպէս կը լինի:

Մեր վէճը տեղի ունի անսովոր րոպէում: Լէօն այդ վէճից ոչ մի բարոյական շահ չի ունենայ, իսկ ուրախացնել չարախնդիրներին՝ կարող է:

Չար մարդկանց հարկաւոր է թամաշա: Նրանց համար միևնոյն կը լինի թէ ինչ կը դուրս գայ մեր վէճից:

Նրանց հարկաւոր է, որ մենք հանդիսանանք իբրև ըմբիշներ, իբրև մենամարտիկներ, և ներկայացումներ տանք դատարկապորտների և չարամիտների զուարճութեան համար:

Մենք իբրև մենամարտիկներ դուրս գալով ասպարէզ, ամենևին մեր հարցը չենք լուծում, ամենևին հասարակական հարց չենք վճռում, այլ մասնակից ենք մի խաղի, որ պէտք է զուարճութիւն պատճառի չարամիտ մարդկանց:

Երբ ես տեսնում եմ, որ մեր շուրջը հաւաքված մարդիկ ամենևին սուրբ, անկեղծ և մաքուր կերպով չեն վերաբերվում մեր մաքառման, այն ժամանակ ես իմ բարոյական պարտաւորութիւնն եմ համարում դիմել ինձ հետ մենամարտողին և ասել.

Յարգելի պարոն,

Մենք ներկայումս գործիք և միջոց ենք չարախնդաց մարդկանց ձեռքին, որոնք չեն յարգում այն դատը, որ դրված է մեր առաջ: Մենք զոհեր ենք ինտրիգներով նիւթված մի շրջավայրի, որ մեզ ուզում է խաղացնել և յետոյ խնդալ գիւական սատանայութեամբ:

Եթէ դուք այդ չէք նկատում, գոնէ մեզ համար նա չափազանց պարզ է ու ակներև:

Ձեր կեղծ պաշտպանը ձևանալով՝ մարդիկ կը կռուեցնեն ձեզ ձեր նախկին բարեկամների հետ, ցանկանալով, որքան կարելի է շատ թիւրիմացութիւններ և սկանդալներ սարքել այն բոլոր մարդկանց շրջանում, որոնց հետ դուք տարիներ շարունակ գործել էք:

Ես գոնէ չեմ ուզում ինտրիգների և որոգայթների առարկայ լինել, ես չեմ ուզում «Մշակի» էջերը լցնել վէճերով ձեր և իմ մէջ, իսկ յետոյ ձեր և շատ ուրիշների միջև:

Դուք և խմբագրութեան ներկայ անդամները և հեռաւոր մեր ընկերները շատ բաներով ենք կապված «Մշակ» [illegible] «Մշակի» և նրա գործողների անունների հետ:

Չը նայելով նոյն իսկ այն հակաճառութիւններին, որ ծագել են ձեր և խմբագրութեան մէջ, այնուամենայնիւ մենք չենք կարող մոռանալ մեր տարիներ շարունակ միասին արած գործերը, միասին մղած մաքառումները, տարիներ շարունակ միասին կրած մեր տանջանքները ու ստացած ուրախութիւնները:

Եւ ահա այժմ զբաղեցնել հասարակութիւնը մեր մասնաւոր վէճերով՝ թէ ապարդիւն է և թէ ոչ ուսանելի:

Դուք մեր նամակագրութիւնը տպագրութեան յանձնեցիք: Դա ձեր գիտնալիք գործն էր, ի հարկէ, դուք այդպէս աւելի բարւոք համարեցիք: Դուք ծանօթացրիք հասարակութեանը ձեր և մեր մէջ ծագած թիւրիմացութեան հետ:

Ո՞ւմ և ինչու համար էր այդ հարկաւոր—մենք չը գիտենք: Ամենայն դէպս, դուք գանգատվելու տեղիք չէք կարող ունենալ և պէտք է գոհ լինէք այն կողմից, որ ձեր նամակների տպագրութեան հանգամանքները նպաստաւոր էին ձեզ համար: Եւ արդարև՝ ձեր երկրորդ մեծ պատասխանին ես մանրամասն հերքումներ չէի գրել, երկրորդ դուք իմ առաջին պատասխանը զարդարել էիք ձեր ծանօթութիւններով և վերջապէս գրել էիք մի ընդարձակ վերջաբան:

Ձեր կողմն էին տեխնիկական բոլոր առաւելութիւնները: Իսկ ես իմ բոլոր յոյսը դրել էի միայն և միայն արդարութեան յաղթանակի վրա:

Նամակագրութիւնը տպվելուց արդէն անցել է 10—12 օր և ուրեմն նա կարող էր գործել այն բոլոր, ձեզ համար նպաստաւոր, տրամադրութիւնը, որ աչքի առաջ ունէիք դուք: Եւ փաստօրէն ուրեմն միայն մենք պէտք է լինէինք:

Մենք սակայն այդ բանից չը վախեցանք:

Մենք պատասխանատու ենք մեր նամակների ամեն մի տողի համար:

Եւ հաստատ հիմք ունենք կարծելու, որ հասարակութեան բանիմաց մասը ըմբռնել է գործի էութիւնը և խմբագրութեան շիտակ դիրքը:

Եւ այնուամենայնիւ մենք համարում ենք այդ նամակագրութեան լոյս ընծայելը մի սխալ ձեր կողմից:

Մենք մեր բռնած դիրքը պարզեցինք: Լսեցէք և այս:

Մի ժամանակ Րաֆֆին գրեց մի նամակ Արծրունուն և խզեց իր յարաբեութիւնները նրա հետ։ Արծրունին չը պատասխանեց։

Եւ այդ առիթով ոչինչ չը տեսաւ։ Եւ դրանից ոչինչ չը կորցրեց հասարակութիւնը։

Երբ Ամերիկեան մասին ամէն տեսակ լուրեր էին տարածում մեղուականները, Արծրունին չը նայելով իր անմեղութեան, երկար վիճաբանութիւն չը սկսեց։

Եւ լաւ արաւ։

Հետևենք այդ օրինակներին։

Եթէ Արծրունու զգայուն ոգին կարողանում էր զսպել իրան այդպիսի հանգամանքներում, հետևենք նրան, իսկ չարամիտներին մեր հաշւով զւարճութիւններ չը տանք։

Մենք ձեզ առաջարկեցինք ընկերական շրջան, որտեղ և կը լսէինք ձեր բացատրութիւնները ձեր բռնած դիրքի մասին։

Անշուշտ դուք էլ կը լսէիք մեր բացատրութիւնները։

Դուք առաջարկել էք բոլորովին անտեղի կերպով միջնորդ դատարան, մինչդեռ դուք մեր խմբագրատանը միշտ խօսում էիք միջնորդ դատարանների դէմ։

Ցամենայն դէպս, մենք մտադիր չենք շարունակել լրագրական վէճ նոյն առիթով։

Մեր հասարակութիւնը յոգնել է աւելի կարևոր վէճերից, էական հասարակական խոր նշանակութիւն ունեցող պայքարներից, և ինչպէս նրան սկսենք կերակրել այժմ նոր վէճերով, որոնք չափազանց սահմանափակ նշանակութիւն ունեն մեծ հասարակութեան համար։

Մենք վերջ ենք դնում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոֆիա, 21 նոյեմբերի։ Այստեղ եկաւ հայ յեղափոխականների պարագլուխ Անդրանիկը, որ շրջում էր Եւրոպայում նպատակ ունենալով հաշտեցնել իրար հետ հայ յեղափոխականների թշնամացած ֆրակցիաներին։

(«Հեռ. գոր.»)

Երէկ կաթուածի երրորդ հարուածից վախճանվեց գանձակեցի երկարամեայ գաւառական բժիշկ Թէմուրեանը—Գաման-Քաթիպայի և Քանանեանի մտերիմ ընկերը։ Ինչպէս յայտնի է, այս երեք անուան և ազգանուան տառերից է բանաստեղծը կազմել Գաման-Քաթիպայի պսեվդոնիմը։ Բժ. Թէմուրեանը լուռ ու մունջ, պարտաճանաչ գաւառական գործիչներից էր։ Նա մեռաւ 73 տարեկան հասակում։

Սագան

Դէպքեր Պարսկաստանում

Ինչպէս գիտենք, դեռ անցեալ տարի Թիւրքիան առանց որևէ առիթի Պարսկաստանի կողմից մի զօրախումբ ուղարկեց Ատրպատական նահանգի սահմանագլուխը և գրաւեց Լայիջան տեղը ու մի քանի ուրիշ գիւղեր Ուրմիա գաւառի մէջ, պատրուակ բռնելով թէ մի քանի գիւղեր պատկանում են Թիւրքիային։ Թիւրքիայի այդ վարմունքը՝ բարդութիւններ առաջ բերել Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ՝ համարվում էր թելադրված Գերմանիայի կողմից, բայց թէ ինչ նպատակներով, մնում էր անյայտ։ Ռուսաստանը և Անգլիան, ամենից շատ շահա[illegible]նում, զգալով խորհուրդը Գերմանիայի կողմից, շտապեցին միջամտել և պաշտպանել պարսից կառավարութեան բողոքը, որ պահանջում էր Թիւրքիայից անմիջապէս յետ քաշել իր զօրախումբը։ Շնորհիւ այդ միջամտութեան, Թիւրքիան համաձայնեց, որ իր վէճը Պարսկաստանի հետ քննվի միջնորդ դատարանով, և յետ քաշեց զօրքը։

Սակայն այժմ, ինչպէս գրում են մեզ Ուրմիայից, նոր դէպքերը գալիս են ապացուցանելու, որ Թիւրքիան, առանց սպասելու միջնորդ դատարանի որոշման, մտադիր է նոր բարդութիւններ առաջ բերել։ Մի քանի օր առաջ թիւրքական մի զօրախումբ, ոմն Իբրահիմ բէգի հրամանատարութեամբ, անցնում է սահմանագլուխը և գալիս գրաւում Բէնդ գիւղը, որ Ուրմիա քաղաքից մի փարսախ (7 վերստ) հեռու է։ Գրաւելով այդ գիւղը, բէգը պահանջում է գիւղացիներից վճարել իրան տարեկան հարկերը։ Ուրմիայի նահանգապետը և քարգուզարը (արտաքին գործերի պաշտօնեան) մարդ ուղարկելով հարցնում են Իբրահիմ բէգից ինչ իրաւունքով և ում հրամանով նա մտել է պարսկական հողը և գրաւել գիւղը։ Բէգը պատասխանում է. «Գրաւել եմ իմ կառավարութեան հրամանով և սպասում եմ երկրորդ հրամանի Բ. Դռնից մտնելու և գրաւելու նաև Ուրմի քաղաքը»։

Նահանգապետը անմիջապէս հեռագրում է Թէհրան կենտրոնական կառավարութեան, բայց դեռ ոչ մի կարգադրութիւն չէ եղել։

Այդ գրաւումը, անկասկած, կապ ունի այն պահանջի հետ, որ մի քանի ժամանակ առաջ գերմանական կառավարութիւնը արեց Շահից՝ տալ Բաղդադի երկաթուղին կառուցանող գերմանական ընկերութեանը կոնցեսիա շինելու երկաթուղի Բաղդադից մինչև Համադան և այդտեղից մինչև Թէհրան։ Շահը մերժեց այդ պահանջը, և ահա այդ մերժմանն անմիջապէս հետևեց թիւրքական զօրախմբի առաջխաղացումը պարսկական հողի վրա։

Գերմանիան, հաւանօրէն, դրանով կամենում է ստիպել Շահին կատարել իր պահանջը։

ՁԻՆՎԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին, ցերեկվայ ժամի $11^{1}/_{2}$-ին, Եկատերինեան ջրանցքի և Ֆոնարնի փողոցի անկիւնում անյայտ չարագործներ զինված յարձակվում են գործել նաւահանգստի մաքսատան գանձապահ Գերմանի վրա և խլել նրանից պետական դրամները՝ 386,000 րուբլի կանխիկ գումար։ Գերմանը մաքսատնից նահանգական գանձարան էր տանում 660,000 րուբլի, որոնցից 214,000 րուբլին տոկոսաբեր թղթերով էին, իսկ մնացեալ 386,000 րուբլին կանխիկ։ Գանձապահը մաքսատան երեք պահապաններով գնում էր լանդոյով ութ ձիաւոր ժանդարմների ուղեկցութեամբ։ Երբ կառքը մօտենում է Ֆոնարնի փողոցին, մօտակայ գաւեջրատան մօտ կանգնած մի խումբ մարդիկ ռումբ են նետում նրանց վրա, որը պայթում է ահագին դղրդիւնով։ Ժանդարմների ձիանները վախեցած այս ու այն կողմ թռան ու փախան, իսկ լանդոյին լծված ձիանները վիրաւորվեցին, որոնցից մէկին վերջում հարկ եղաւ ազատել տանջանքներից գնդակահարելով։ Լանդոն չէր վնասվել. գանձապահը և պահապանները դուրս են թռչում կառքից և սկսում փախչել։ Գերմանը պատահարի ազդեցութեան տակ սաստիկ ցնցում էր ստացել և անզգայ վայր էր ընկել մօտակայ տներից մէկի մօտ։

Շփոթութիւնից օգտվելով երկու անյայտ մարդիկ մօտ են վազում և գողանում կառքի մէջ գտնվող երեք տոպրակներով 660,000 րուբլին։

Երբ ժանդարմները ուշաբերվեցին, անկարգ հրացանաձգութիւն սկսեցին դէպի ծովափը։ Գնդակներից մէկը կպաւ Եկատերինեան ջրանցքի վրա № 78 տան մէջ գտնվող ճաշարանի դրանը, պայթելով դէմ առ դէմ։ Անյայտները նոյնպէս սկսեցին կրակել ատրճանակներով։ Ժանդարմներից մէկը ծանր վիրաւորվում է, իսկ միւսը թեթև։

Նետելով երկրորդ ռումբը, անյայտները իբրև թէ ներս են փախչում հենց ճաշարանը և գողացված փողերը յանձնում այնտեղ իրանց սպասող մի կնոջ։

Այդ կինը դրամները տեղաւորում է պայուսակում, ապա, դուրս գալով ճաշարանից, կառք նստում ու անյայտանում։

Այդ միջոցին, Ֆոնարնի և Կազանսկի փողոցների անկիւնում անյայտ մարդիկ նետում են երրորդ ռումբը։ Ուժեղ պայթիւնից մօտիկ տների լուսամուտների ապակիները ջարդ ու փշուր են լինում, փողոցի մայթերը և սալայատակները ծածկվում են ապակու կտորներով։

Ականատեսները պատմում են, որ շփոթութիւնը աննկարագրելի էր։ Մարդիկ սարսափահար փախչում էին ով որտեղ կարող էր, կառապանները խելագարի նման քշում էին ձիանները ու չքանում։ Ձիաւոր ժանդարմները կատաղած, գլխաբաց դէս ու դէն էին սլանում առանց իմանալու, ինչ անել և ում հալածել։

Սկսվեց գնդակահարութիւնը։

Անյայտ մարդիկ փախան այս ու այն կողմ և աշխատում էին դէպքի տեղի հարևան փողոցներում թաքնվել։

Եկան ձիաւոր և հետևակ գորոդովոյները, լէյբ-գվարդիայի գնդակաձիգ գնդի հեծեալ վաշտը։

Սարսափը աւելի ևս սաստկացաւ։

Դէպքի տեղը շրջապատում են զօրքերով և մինչև ժամի 5-ը ոչոքի չեն թողնում դուրս գալու։ Ասում են, որ յարձակվողներից մէկը սպանված է, իսկ երկուսը կալանաւորված։ Կինի ճաշարանի մօտ անյայտ մարդիկ թողել են արժեթղթերի տոպրակը։

ՆՈՐ ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ

Ներկայումս Պետերբուրգի դատաստանական պալատում քննվում է «Բանւորական պատգամաւորների խորհուրդ»-ի գործը, որի [illegible] ները, յայտնի Խրուստալովը։ Մօտաւորապէս մի ամբողջ տարի այդ «խորհուրդը», բանտում նստելուց յետոյ, այժմ վերջապէս դատվում է։ Այդ գործի քննութիւնը ինքնըստինքեան չափազանց մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում։ Բայց ամենից հետաքրքրականը դրա մէջ այն է, որ մեղադրվողների պաշտպանները երևան են հանել մի այնպիսի դոկումենտ, որը ամբողջ մի նոր սկանդալ է բաց անում։

Այդ դոկումենտը ոստիկանական դեպարտամենտի նախկին դիրեկտոր Ա. Լօպուխինի ներքին գործերի մինիստր Ստոլիպինին գրած մի նամակի պատճէնն է։ Դեռ սրա մինիստրութիւնից առաջ, Վիտտէն յանձնարարել էր Լօպուխինին մանրազնին քննութիւն կատարել այն մասին, թէ ո՞ր աստիճան ոստիկանական դեպարտամենտի չինովնիկները դեր ունեն պօգրոմներ կազմակերպելու գործում։ Լօպուխինը մեծ խղճմտանքով էր կատարել իրան յանձնված գործը և անհաւատալի մերկացումներ էր առաջ բերել։

Սակայն փոխվեց Վիտտէի մինիստրութիւնը, և Պետական Դումայի հէնց սկզբնաւորութեան հետ կառավարութեան գլուխ անցաւ Գորեմիկինը։ Այնուհետև ձայն չէ լսվում այն՝ ամբողջ Եւրոպայի ու Ռուսաստանի հասարակական կարծիքը տակն ու վրա անող սոսկալի և անհաւատալի մերկացումները, որ մի գեղեցիկ օր Պետական Դումայում արեց նախկին մինիստրի օգնական իշխան Ուրուսովը պօգրոմների ու դրանց կազմակերպող բարձրաստիճան ադմինիստրացիայի վերաբերմամբ։ Այդ հրէշաւոր խայտառակութիւնից ու սկանդալից գլուխը կորցրած մինիստրը, իր ստորադրեալ պաշտօնեաների մատակարարած նիւթերի ու ցուցմունքների վրա յենվելով, դուրս եկաւ և ամենայն վստահութեամբ փորձեց հերքելու իշ. Ուրուսովի արած յայտնութիւնները։

Ահա հէնց այդ մինիստրական հերքումից յետոյ է (յունիսի 14 ին), որ Լօպուխինը ուղարկել է իր վերոգրեալ նամակը Ստոլիպինին։ Այդ նամակում ոստիկանական դեպարտամենտի նախկին դիրեկտորը այնպիսի մերկացումներ է անում, որոնց առաջ, ինչպէս պատմում են մայրաքաղաքի թերթերը, իշխ. Ուրուսովի մերկացումները բոլորովին նսեմանում են։ Նա ամենայն մանրամասնութեամբ պատմում է փաստեր և մի առ մի թւում է, թէ ոստիկանական դեպարտամենտի պաշտօնեաներից ով և ինչպիսի եղեռնական դեր է կատարել պօգրոմներ կազմակերպելու ժամանակ։ Իրանց խուլիգանութեամբ արդէն վաղուց յայտնի Բաչկովսկու և Կոմիսարովի անուններից բացի, որոնց մասին արդէն խօսել էր Ուրուսովը իր մերկացումների ժամանակ, Լօպուխինը իր նամակ-ում մերկացնում է և ոստիկանական դեպարտամենտի նախկին դիրեկտոր, իսկ այժմ սենատոր Վուիչին, որին, ինչպէս երևում է, Ուրուսովը խնայել էր ու նրա մասին ոչինչ չէր ասել։

Լօպուխինը իր այդ նամակի վերջում այն միտքն է յայտնում, թէ ներքին գործերի մինիստրը, իշխ. Ուրուսովի մերկացումները հերքելու ժամանակ, չը գիտէր, թէ ինչ է կատարվում իր սեփական մինիստրութեան խորխորատներում, և որ մինիստրութեան իսկական տէրերը, ոչ թէ ինքը՝ մինիստրն է, այլ բոլորովին այլ մարդիկ։ «Բացայայտ կառավարութիւնից զատ,—ասում է Լօպուխինը,—մենք ունենք և մի գաղտնի կառավարութիւն, որը առաջինից աւելի զօրաւոր է և որի ձեռքումն է գտնվում կառավարչական իսկական ղեկը»։

Այս հետաքրքրական դոկումենտի in extenso հրատարակվելը, անշուշտ, հասարակական կարծիքի մի նոր փոթորիկ պիտի պայթեցնի։

Ի լրումն մեր քաղած տեղեկութիւնների, կարևոր ենք համարում աւելացնել, որ «Բանւորական պատգամաւորների խորհրդի» պաշտպանները խնդրել էին դատարանից, որ այդ կարևոր դոկումենտն էլ կցվի մեղադրվողների գործին, ու Լօպուխինն էլ իբրև վկայ հրաւիրվի։ Բայց «արդարադատ» դատաւորները մերժել են այդ երկու խնդիրն էլ առարկելով թէ՝ «դա գործին չէ վերաբերում»։

Խ.

ՁՐԿՎԱԾԻՆ ՀԵՇՏ Է ՁՐԿԵԼԸ

Մինիստր Ստոլիպինը, չը բաւականանալով ընտրողական իրաւունքների այն բոլոր խուզումներով, որ վերջերս արել էր սենատը, իր «բացատրութեամբ», «գիւղացիների» և բանւորների վերաբերեալ, և որի մասին մենք հաղորդեցինք «Մշակի» անցեալ № 231-ում «Ընտրութիւնների շուրջը» յօդւածով, այս օրերս նորից դիմել է սենատին, որ սա «բացատրի» կրկին, թէ արդեօք ինչպէս պիտի հասկանալ օրէնքների այն կէտը, որը առանձին բնակարան վարձողին թոյլ է տալիս ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունենալ։

Քանի որ հարցը վարձու բնակարան ունեցողների մասին է, պարզ բան է ուրեմն, որ այժմ ցանկանում են ընտրողական իրաւունքից զրկել արհեստաւորներին, գործակատարներին, ինտելիգենտներին և այն բոլոր խաւերին, որոնք, իրանց հասարակական դիրքի ու դասակարգային շահերի շնորհիւ, կարող են ընտրողների մէջ ամենադեմոկրատիկ տարրը կազմել։ Շատ հասկանալի է նոյնպէս, որ խոշոր ու նոյնիսկ միջակ բուրժուազիան ոչինչ չի կորցնի սենատի «բացատրութիւններից», որովհետև նրանց մեծ մասը իրանց սեփական տներումն ապրում, իսկ սեփական տուն չունեցողն էլ այնպիսի մի մեծ բնակարան է ունենում, որի ցենզի մասին և ոչ մի կասկած չէ կարող լինել։ Թող հոգին դուրս գայ, ուրեմն, փոքր բնակարան ունեցողի. ամեն կողմից զրկվածին մի փոքրիկ «բացատրութեամբ» սենատն էլ կը զրկի…

Ռ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՆՈՐԱՏԻ ՄԱՅՐԵՐԻՆ

Երբ լինում է մի էպիդեմիա, մեր հասարակութիւնը ահ ու սարսափի մէջ է ընկնում և միևնոյն ժամանակ շտապում է միջոց, այժ գործ դնել առաջն առնելու համար։ Եթէ կեանքը գիտելու լինենք, կը տեսնենք, որ մեր մէջ կան առաւել ևս սարսափելի էպիդեմիաներ՝ անուշադրութեան թողնված, որոնք լուռ կերպով ճարակում են անթիւ զոհեր մեր [illegible] ժամանակ, շնորհիւ տգէտ մանկաբարձուհիների, որոնց թիւը դժբաղդաբար մեզ մօտ շատ և շատ է։ Վերջիններս իրանց ձեռքն են գցում երիտասարդ մայրերի բաղդը և անթիւ զոհեր պատճառելով հանդերձ սառնասիրտ կերպով շարունակում են իրանց պատասխանատու պաշտօնը, առանց խղճի խայթ անգամ զգալու։ Այդ տեսակ մանկաբարձուհիների տգիտութեան զոհ են դառնում շատ նորատի կանայք, դժբաղդ շատ մայրեր, բայց ո՞վ բողոք բարձրացրեց, կամ կոչ արեց երիտասարդ, անփորձ նորատի կանանց, որ նրանք զգոյշ զգուշանան այդպիսի պատահական մանկաբարձուհիներից, որոնց ծննդաբերական հիւանդութեան պատճառ են դառնում իրանց տգիտութեամբ, անզգուշութեամբ։

Մի համառօտ գաղափար տալու համար թէ ինչ հսկայական զոհեր են տանում այդ ծննդաբերական կոչված հիւանդութիւնները, յիշենք որ այդպիսի հիւանդութիւնների շարքին է պատկանում «արեան վարակում» կոչված հիւանդութիւնը «Гнилекровіе» (септицэмія), որի առիթով բժ. Բերեժևի դուրս բերած ստատիստիկայից երևում է, որ վերջին 60 տարվայ ընթացքում Պրուսիան տուել է 363.624 զոհ մինչդեռ նոյն ժամանակամիջոցում խոլերայով վախճանվել են 170,000, իսկ ծաղիկից 165,000։ Այդ երկու էպիդեմիայի տարած զոհերի թիւը եթէ գումարելու լինենք, կը տեսնենք, որ արեան վարակումից վախճանվել են 28,624 հոգի աւելի, քան թէ խոլերայից։ Չը պէտք է մոռանալ, որ ծննդաբերութիւնը յատուկ է միմիայն 15—45 տարեկան հասակին, մինչդեռ խոլերայից և ծաղկից մեռնում են՝ երեխայ հասակից սկսած մինչև զառամեալ հասակը։ Այդ բոլորի վրա աւելացրէք, որ Ռուսաստանը կրթութեամբ շատ յետ է Պրուսիայից, այն ժամանակ կարող էք երևակայել թէ որպիսի հսկայական զոհեր է տալիս Ռուսաստանը։

Թող ուրեմն մեր երիտասարդ, անփորձ, նորատի կանայք զգուշանան իրանց բաղդը գցելու պատահական մանկաբարձուհիների ձեռքը և երբեք խորթ աչքով չը նայեն հիւանդանոցներին, ենթադրելով որ հիւանդանոցները միմիայն չունևորների, յարմարութիւն չունեցողների համար է, որտեղ կարող են շատ հիւանդանալ և այլն. հիմնովին սխալ է այդ կարծիքը, քանի որ մի բժիշկ իր գիտութեամբ աւելի է գնահատելի, քան ամենասիրելին իր անգիտութեամբ։ Թող մեր մանկաբարձուհիներն էլ մասների սրանքից չը նայեն իրանց պատասխանատու պաշտօնի վրա և լուրջ վերաբերվեն, քա ի որ մարդկային կեանքի հետ գործ ունին, և թող բժշկի ներկայութիւնից չը քաշվեն, կարծելով որ իրանց պրեստիժ կարող են դցել…

Աւելորդ չեմ համարում յիշել մի ցաւալի եղելութիւն, որ շատ շատերից մէկն է և կապ ունի իմ անձնական հետ. սեպտեմբերի 1-ին կնոջս համար հրաւիրում եմ մանկաբարձուհի տ. Բ—ին, որը առանց որևէ դժուարութեան ազատում է կնոջս։ Չը նայելով որ առանձին աչքի ընկնող դէպք չը պատահեց, բայց և այնպէս հանգստութեանս համար առաջարկեցի բժիշկ հրաւիրել։ Մանկաբարձուհին, ըստ երևոյթին ամօթ համարելով, որ ինքը բժշկով է ազատում, ամեն կերպ սկսեց համոզել ինձ, որ բժշկի ոչ մի կարիք չը կայ։ Դժբաղդաբար հիւանդը աննկատելի կերպով ծննդի ժամանակ վարակվում է «արեան վարակումով». իսկ թէ ինչպէս, մեզ համար մինչև այսօր մնաց մութ։ Երկրորդ օրը հիւանդի տաքութիւնը բարձրանում է 38°. այս անգամ մեր հմուտ մանկաբարձուհին աշխատում է հիւանդին բժշկել խինինով և լուծողական դեղերով և մեր առաջարկութիւնը բժիշկ հրաւիրելու մասին դարձեալ միանգամայն աւելորդ էր համարում և հիւանդի տաքութիւնը բացատրում էր անկողնուց, որ իբրև թէ սովորական է ծննդաբերականներին։ Բայց հիւանդութիւնը հսկայաբար առաջ էր գնում ու հիւանդի տաքութիւնը աստիճանաբար բարձրանում։ Դրութիւնը կրիտիկական էր դարձել. նոր միայն մենք տասնեակ բժիշկներ հրաւիրեցինք, որոնք կոնսիլիումներ նշանակեցին, մաքառեցին հիւանդութեան դէմ ամենաեռանդուն կերպով, բայց ամեն ջանք իզուր էր և դժբաղդը տգիտութեան զոհ գնաց։

Մկրտիչ Յակոբջանեան

«ԴԻՖԱՅԻ»

«Իրշադի» երէկվայ 241-դ համարում մի նշանակալից յօդուած կար զետեղված։

Դա մի կոչ է «Դիֆայի» («Պաշտպանութիւն») անունով հանդէս եկողների կողմից, մի նոր կազմակերպութեան անունից, որը Թուրքերի անձնապաշտպանութեան գործում մեր նախկին Դաշնակցութեան դերը կատարող մի կազմակերպութիւն է խոստանում լինել մօտ օրերում։

Խմբագրական ծանօթութիւնից տեղեկանում ենք, որ պօստի ծրարի մէջ ամփոփված, իր ճակատի վրա՝ երկու դաշոյններ, լուսին, աստղերի մէջ «Դիֆայի» անունն ու զրօշմը կրող այդ կոչն, իր ամբողջութեամբ չէ տպագրված։ Որովհետև ազգը իր վերջում՝ կովկասեան Փոխարքայի հասցէին, գրաֆի վերաբերեալ վիրաւորիչ տողեր ու դատողութիւններ է ունեցել։

Նոր այդ կազմակերպութիւնը յայտնում է, որ գազանական ընդհարումներից Թուրք ազգի կրած ծանր հարուածներին վերջ տալու և նրա թշնամու դէմ կռիւ մղելու համար հազարաւոր հոգիներ երդվել են Ղուրանի վրա թէ դրամական միջոցներով, թէ զէնքերով, թէ իրանց անձով և թէ նոյնիսկ ռումբերով ոչ մի զոհի առաջ կանգ չառնել, ուր այդ անհրաժեշտ է, ուր վտանգված կը լինի ազգի կեանքը, պատիւը և իրաւունքը։

Սակայն դա արհաւիրք չէ, որ ուզում են սփռած լինել Կովկասում, այլ այդ ներկայ պայմաններում իւրաքանչիւր մի ազգի գոյութեան բնածին իրաւունքն է, մինչև այն փափագելի, երջանիկ օրվայ գալուստը, երբ ընկերականն ու եղբայրականը հաւասար շահերով ու իրաւունքներով սերտ միացած՝ կը գան փշրելու ամեն բաժանող խտրութիւն, ջնջելու ամեն եղբայրադաւ հալածանք ու բռնութիւն։

Ուստի սիրով ողջունելու են արժանի նոր կազմակերպութեան հետևեալ տողերը.

«Մի որևէ ազգի իրաւունքը, առանձնայատկութիւնը և ազգային արժանա[illegible] չունենք։ Մեր գլխաւոր նպատակը բոլոր կովկասեան ազգութիւնների համերաշխութիւնն է և իսկական եղբայրական զգացմունքների զարգացումը։ Եթէ (հայ) դաշնակցականները մաքուր սրտով իրանց ձեռքը մեզ երկարելու չեն մերժի, մեզանից չեն ծածկի իրանց ծրագիրը, և եթէ այդ ծրագրով գոհացուած կը տան բոլոր կովկասեան ազգութիւնների հաւասար, անխտիր ընդհանուր շահերին, այն ժամանակ նրանց մեր եղբայրներ համարելով՝ այդ ընդհանուր գործում պատրաստ ենք նրանց ընդառաջելու և նրանց հետ ձեռք ձեռքի տուած ի միասին աշխատելու»։

—«Ջուղողի աչքը դուրս գայ»,—կասի հայ ազգը ի սրտէ, բայց նա շատ պիտի զարմանայ և ցաւի, կարդալով հետևեալ տողերը.

«Բայց եթէ դաշնակցականները շարունակեն հաւատարիմ մնալ իրանց որոշած նպատակին, իրանց ոյժերը մուսուլմանների դէմ ուղղելուն, օգտվելով նրանց թուլութիւնից, այն ժամանակ նրանք մեր կողմից էլ կը հանդիպեն ուժեղ ընդդիմութեան և այն ժամանակ ամբողջ Կովկասը արեան արենայի ասպարէզ պիտի դառնայ»։

Այո, շատ ցաւալի է, որ «Դիֆային» և մինչև այսօր չէ կարողացել ճանաչել մեզ ամեններս արիւնուշայ անող մեծ չէյթանին։

Ո՛չ, պարոններ, որքան գովելի է ձեր համերաշխութեան և եղբայրութեան առաջարկը, նոյնքան աններելի, նոյն իսկ դատապարտելի են արիւնի սպառնալիքները։

Ազգայնական թշնամութեամբ լցված այդպիսի ծրագրի գոյութիւնը անպատւութիւն կը բերէր չէ թէ Դաշնակցութեանը, այլ և ամբողջ հայութեանը, որի անվերջ շարունակվող հալածանքի և կրած տառապանքի յուսահատ ծնունդն է եղել թէ նա՝ այդ Դաշնակցութիւնը և թէ «Հնչակը» (որը նոյնպէս տանջանքների արտայայտութիւն էր)։ Իսկ եթէ երկու հարևան ազգութիւններ արեան մէջ լողում և բռնկված հրդեհի կրակի մէջ այրվում էին, այդտեղ մեղքը ոչ մերն էր, ոչ ձերը, և ոչ էլ Դաշնակցութեան ծրագրինը։

Աշխատաւոր գիւղացին, չարքաշ բանւորը, արհեստաւորն ու վաճառականը մեր և ձեր քաղաքանց եղած և եղող ընտանիքները մի առանձին, յատուկ շահերով էին դրդված և իրանց ցանկութեամբ էր, որ ենթարկվեցին կարմիր ու սև պատուհասին։ Իսկ երբ պատուհասը վրա էր հասել, պարտաւոր չէին ձեր որդիքը և եղբայրները ձեզ պաշտպանելու՝ առանց «Դիֆայի» և «Դաշնակցութիւն» անունը կրելու։ Եւ մեր որդիներն ու եղբայրներն էլ, որ մեզ էին պաշտպանում, ուրեմն նրանց ծրագիրն ու «դաշնակցական» անուններ էին պահանջվում այդ։

Հայ ազգի և նրա Դաշնակցութեան միակ պահանջը թէ Տաճկահայաստանում, և թէ Կովկասում ի սկզբանէ եղել է հաւասար իրաւունքի, ընտանեկան պատուի, գոյքի, ազգային լեզուի և առանձնայատկութիւնների պաշտպանութիւն, այն, որոնցից զրկելը, որոնց շահագործելը ինքներդ էլ այսօր իրաւունք չէք համարում որևէ ազգի, որը և Դաշնակցութիւնն է պահանջում իր ծրագրով։ Ո՞ւր է այդ ծրագրում այն նպատակը, որը ուղղված էր ընդդէմ մուսուլմանների։ Եթէ մենք այդ տարրական իրաւունքների համար կռիւ էինք մղում բիւրոկրատ Գոլիցինների կառավարութեան դէմ, մի՞թէ այդ համայն Ռուսաստանի, ռուսների և սլաւոնականութեան դէմ պէտք էր համարել։

Տաճկաստանում, ուր կառավարութեան անտանելի, ծանր պայմաններից ու բռնութիւններից միահաւասար պատժի են ենթարկված հայը, տաճիկը, ասորին, արաբը և մակեդոնացին, եթէ բռնաբարված մարդկային իրաւունքների համար՝ սպանիչ ռեժիմի դէմ էլ համբերել չը կարողանայ հայն ու արաբը, մի՞թէ այդ ընդհանուր մուսուլմանութեան դէմ պէտք է համարել։

Դաշնակցութեան ծրագրով, թէ այդ ծրագրից դուրս, բացի շնորհակալութիւնը, հայը ե՞րբ է պարսից կառավարութեան դէմ առիթ ունեցել հակառակութեան կամ ընդհարման։ Եթէ հայերի նպատակը իրանց ոյժերը մուսուլմանների դէմ ուղղելու հաւատարմութեան մէջն է կայանում, ինչու Տաճկաստանից տկար Իրանի մուսուլմանութեան հետ նրանք հաշտ բարեկամներ մնացին մինչև այսօր։

Դաշնակցութեան ծրագիրը տաճկին, ռուսին, ոչ իսկ քիւրդին ու խանխուռլին թշնամի ճանաչել չէր կարող, երբ հայի հետ միասին դրանք էլ էին զոհ բիւրոկրատ անգութ գազանների։ Դրանց նիւթած զաւերին, դրանց անխիղճ, սատանայական հրճւանքին—մահմեդական թէ քրիստոնեայ—քիչ անմեղ զոհեր չը տուինք մենք ի միասին։ Ոչ, այդպիսի հրէշաւոր ծրագիր չունի Դաշնակցութիւնը և ունենալ անգամ չէ կարող, որովհետև դա՝ ընդհ. հայութեան հոգու ու գիտակցութեան հակառակ՝ նրա բուռն զայրոյթի առարկան միայն կարող էր լինել, որով և կարգացնէր Դաշնակցութեան շուտափոյթ անկումն ու մահը։

Մի բոպէ թոյլ տանք, որ անգամ ծրագրից դուրս դաշնակցականները մի այդպիսի խելագար նպատակ էլ ունեն մուսուլմանների նկատմամբ. բայց յետո՞յ։

Յետոյ այդպիսով մենք չէինք օգնի չէյթանին իր վաղուցվայ փափագը կատարված տեսնելու։

Այդ չէ՞ր նշանակի Գոլիցինին կրկին հրաւիրել, որ նա գայ, մեզ բնաջինջ անող մահաբերայր վրա ցնծալով ազատ՝ իր «կամարինսկին» պար գայ։

Կուլտուրական անուան արժանի չէ այն ազգը, որ բժշկելու փոխարէն թաղցնում է իր վէրքերը, որ իր թերութիւնները տեսնելու, ուղղելու փոխարէն աչքերն է փակում։ Հայերն պատիւ չէր բերի մի այդ տեսակի վայրենութիւն, որը մարդկային լեզուով գազանութիւն է կոչվում։

Որ Դաշնակցութեան ծրագիրը ազգ ջնջելու նման գազանութիւն չունի—այդ ճշմարտութիւն է. իսկ թէ Դաշնակցութեան ծրագիրն ու կազմը մեծ պահանջ ունին վերանորոգութեան, այդ մասին ոչ թէ կուրանում կամ թաքցնելով ուրանում է հայը, այլ ընդհակառակն, ահա երեք ամիս է արդէն, որ բողոքելով նոր հանդէս եկած միջամտների դէմ, լոյս տեսնել տակ է հանում ու փաւում Դաշնակցութեան մութ հորերում պահված ցա[illegible] ձեռներից մաքրելու համար։

Եթէ դուք հաւատում էք հայ ազգի [illegible] ծութեանն և բարեկամութեանը, դուք կուսակից էք եղբայրական հաշտ կենակցութեանը, ապա ուրեմն վստահ եղէք, ոչ միայն հայի, այլ և վրացու կողմից, որ ոչինչ արգելք չէ կարող լինել համայն կովկասեան ազգերի յառաջ ու բարգաւաճմանը, վերաշինութեանը, զարգացմանը, ծաղկմանը, և աշխուժութեանը։ Ժամանակ է, որ դուք գիտակցէք և զգուշանաք գաւառների բամբասանքներից և լարած թակարդներից, որոնցով մենք շատ ու շատ տուժեցինք։

Ժամանակ է, որ չարամիտների յեղաշրջած փաստերով չը ճանաչէք մեզ։

Եթէ մեր լեզուն, մեր մամուլն ու գրականութիւնը ձեզ հարևաններիդ համար մի-մի «անծանօթ աշխարհներ» չը լինէին, դուք այնպէս դիւրախաբ չէիք լինի պրովօկացիայի ձեռքում ի դժբաղդութիւն մեր և ձեր։

Եթէ քիչ ու շատ ծանօթ լինէիք խուլութեանը, եթէ չը բաւականանայիք փոփոխական քամիների ենթակայ «Իրշադի» և ուրիշների ցանած և տխմարների գլխում բուն դրած հայոց երևակայական թագաւորների ահ ու սարսափներով՝ այն ժամանակ այսչափ ցաւալի չէր լինի մեր ներկան։ Եւ այն ժամանակ առանց մեր ասելու էլ լաւ կիմանայիք, որ հայերն եթէ նոյնիսկ պատրաստի թագաւոր տային, նա նրան ոտով գլխով երկու օրից յետոյ «Իրշադի» խմբագրութեանը կուղարկէր, որպէս պարգև ու «փէշքէշ» հայ ազգի պատմութեան լուրջ ուսումնասիրութեան և կատարեալ տգիտութեան մասին։

Սակայն այսպիսի երևակայական, անհիմն ցնդաբանութիւնների պատմութիւնը մեզ հեռու կը տանէր։ Դրանց ծագման, պատճառների և ցանկութիւնների առիթով բացատրութիւն արդէն մի անգամ տրված լինելով՝ «Հաչ-Դիւէլէթի» 7-դ, 8-դ, և 9-դ, համարներում, մենք այս նամակը կը կամենայինք փակել մի կարևոր ցանկութեամբ։

Եթէ հայի ու թուրքի երկու տարվայ թափած անմեղ արեան վտակները գետերի և հեղեղների չը փոխարկվելու ցանկութեամբ է որ հանդէս է գալիս «Դիֆային». եթէ նա եղբայրսիրական վառ զգացմունքներով, մարդասիրական լայն հոգով, մաքուր գաղափարների սկզբունքներով և լուսաւոր գիտակցութեամբ ևս զինված՝ պիտի գայ, նախապաշարումներից, նեղ թունաւոր շովինիստական միտումներից ազատ, խաղաղութիւնը պաշտպանելու։

Եթէ այդ փրկարար խաղաղութիւնն է նրա տենչանքը,—այն ժամանակ միայն օրհնեալ է Դիֆայի գալուստը։

Յ. Խօջամիր

Բագու, 14 նոյեմբերի

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՄԱՇՈՒՐԵԱՆ

Նորերս վախճանված տ. Պօղոս վ. Նահապետեանի փոխարէն Ալեքսանդրապօլի հայկաթօլիկների հոգևոր հովիւ նշանակված է Հ. Մանուէլ վարդ. Մաշուրեան, որ անդամ է Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան։ Նա իր կրթութիւնն ստացել է Վիեննայում և բացի հայերէնից և եւրոպական լեզուներից գիտէ նաև ռուսերէն։ Նա արդէն 6 տարի է Ռուսաստանում է գտնվում, հովուական պաշտօն վարելով գլխաւորաբար այնպիսի քաղաքներում, ուր ցիր ու ցան բնակվում են փոքրաթիւ կաթօլիկ հայեր։ Նա առաջին անգամ Կովկաս եկաւ 3 տարի առաջ իբրև ուղեկից Սարատովի նախկին լատին առաջնորդ բարօն Ռօպպ եպիսկոպոսին, որ Կովկասի հայ կաթօլիկաց թեմն այցելելիս իր հետ վերցրել էր 2 մխիթարեան վարդապետ՝ մէկը Վենետիկի (Սափարեան վ.) և միւսը Վիեննայի (Մաշուրեան վ.)։ Այժմ Հ. Մաշուրեան բոլորովին տեղափոխված է Կովկաս և առաջին անգամ է յանձն առնում կառավարել մի ընդարձակ վիճակ։ Գործը որոշ դժուարութիւններ է ներկայացնում այն տեսակէտով, որ Ալեքսանդրապօլի վիճակը երկար տարիներից ի վեր ներքին գժտութիւնների ասպարէզ է դարձել շնորհիւ Նահապետեանների նեղ կուսակցական հայեացքներին, ինչպէս շատ լաւ նկարագրել էր պ. Բէրբերեան «Մշակ» № 228)։ Ժամանակ է վերջ դնել քահանայական բայց մանաւանդ զանազան «եկեղեցական բիւրոկրատ ադուէնների» փոխադարձ ինտրիգներին. պէտք է ասպարէզից դուրս քշել Նահապետեանների շկօլայի հետևողներին և եկեղեցական-դպրոցական գործերը յանձնել նոր և թարմ ոյժերի, որոնք ընդունակ լինեն որոշել հարազատ ազգային աւանդութիւններն և ազգային եկեղեցու իրաւունքները նեղ անձնական և կաստայական շահերից։ Մեծապէս ցանկալի է, որ Ալեքսանդրապօլի հայկաթօլիկները իրանց նոր հովուի շուրջը խմբվելով եռանդով ձեռք առնեն վիճակի եկեղեցիների և դպրոցի կանօնաւորման գործը։ Մաշուրեան վ. գուցէ դեռ անփորձ է իբրև վարչական մարդ, բայց իբրև անկողմնապահ, չեզոք և ուսեալ անձնաւորութիւն և իբրև Մխիթարեան միաբան, անկասկած, օգտակար կը լինի իր խնամքին յանձնված հօտին։

Սարուխան

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Կրասնովոդսկ, հոկտեմբերի 2-ին

Եկեղեցական-ծխական դպրոցների վերացման իրաւունքից օգտվեց նաև մեր հասարակութիւնը և միջոցներ ձեռք առաւ իր որդիներին փողոցներից ազատելու։ Դպրոցը բացվեց այս տարվայ յունվարից և մի կերպ քարշ տուեց իր գոյութիւնը մինչև ուսումնական տարվայ վերջը, այսինքն համարեա չորս ամիս։ Կար երկու դասարան մօտ 50 երկսեռ մանուկներով. դասաւանդում էին տիկ. Տէր-Աբրահամեանց և օր. Ղօրղանեանց։ Գործը նոր լինելով ինքն ըստ ինքեան կաղում էր։ Չգիտենք ժամանակի սղութեա՞մբ վերագրենք, թէ ուսուցիչների անհմտութեանն այն երևոյթը, որ մանուկները տարվայ վերջը ոչինչ կանօնաւոր չգիտէին… Երկրորդ պատրաստականի աշակերտները հազիւ հազ կարդում էին, առանց կարդացածից բան ըմբռնելու…

Հոգաբարձութիւնը որոշում է այս տարի բանալ երրորդ բաժանմունք և հրաւիրել երկու ուսուցիչ և մի ուսուցչուհի։ Սեպտեմբերի սկզբին ուսուցչական կազմը պատրաստ էր. բոլորն էլ միջնակարգ կրթութեան տէր էին, ծանօթ գործին և եռանդով կպած… Սա լաւ նշան էր, որ գործը այս տարի գոնէ առաջ կը գնայ, և [illegible]ները ի զուր ժամավաճառ չեն լինի։ Դրանից յետոյ առաջ է գալիս բնակարանի հարցը, թէ որտեղ պիտի զետեղվի ուսումնարանը։ Պէտք է նկատել, որ մեր հասարակութիւնը առանձին դպրոցական շինութիւն չունի։ Վերջապէս հոգաբարձութիւնը համաձայնութեան է գալիս քահանայի հետ, որ վերջինիս բնակարանը դատարկվի ուսումնարանի համար։

Ուսումնարանը բացվում է անցած ամսի 11-ին՝ 72 աշակերտ-աշակերտուհիներով. դասաւանդութիւնը, ինչպէս լսել ենք, առաջ է տարվում նոր ծրագրով…

Ուրախալի է նկատել, որ ուսումնարանում կողք-կողքի նստած են թէ աղքատի և թէ ունեւորի երեխաները, որովհետև ուսումը ձրի է…

Աւելորդ չեմ համարում մէջ բերել մի կարծիք, որ բնորոշում է մեր հասարակութեանը։

Անցեալ օրը խօսում եմ ծանօթիս հետ ի միջի այլոց նաև դպրոցի մասին… «Էս ինչ ա,—ասում է ծանօթս,—կէս ամիս ա երեխաս ուսումնարան ա գնում, բայց հլա գիրք չեն տուել ձեռքը. բա. էդպէս չօլ կը լինի՞»… Հետաքրքրվում եմ և իմանում, որ նրա որդին անգրագէտ է, առաջին բաժանմունքումն… Հասկացնում եմ ծանօթիս, որ անգրագէտ մանկանը չի կարելի իսկոյն գիրք տալ, նրան նախ պէտք է ծանօթացնել իր շրջապատի հետ…

Առանց գրքի ոչինչ չի կարելի սովորել, մանկան ձեռքը առանց այլևայլութեան պէտք է այբբենարանը տալ. ահա մեր հասարակութեան հասկացողութիւնը կրթութեան մասին։

Վերջացնելով խօսքս եռանդ եմ ցանկանում մեր երիտասարդ ուսուցիչներին՝ աջողութեամբ առաջ տանելու մատաղ սերնդի կրթութեան և դաստիարակութեան գործը։

Մ. Արզումանեան

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

(Առաջարկված է 15-ն օգոստոսի Էջմիածնի պատգամաւորական ժողովին)։

Քանի որ դպրոցական խնդիրը հերթական խնդիր է դարձած և հայոց դպրոցների համար ծրագիր պիտի կազմվի մեր դպրոցական կեանքի մէջ նոր հոսանք, նոր ուղղութիւն մտցնելու, ես կը խնդրէի այդ ծրագիրը կազմող յանձնաժողովը աչքի առաջ ունենար և մեր համեստ կարծիքը գիւղատնտեսական դպրոցների ազարակների վերաբերմամբ։

Ամենքին քաջ յայտնի է, որ առհասարակ դպրոցի նպատակը պիտի լինի աշակերտի բնածին ընդունակութիւնները զարգացնել, նրան տալ այնպիսի մտաւոր պաշար ու շրջահայեցողութիւն, որ նա ընդունակ լինի գործնական աշխատանքի և կարենայ գիտակցաբար մաքառել կեանքի խոչ ու խութերի դէմ։ Դժբաղդաբար մեր գիւղական երեխաները (սխալված չենք լինի նոյնը և քաղաքացի երեխաների համար ասել) թէ ընտանեկան և թէ դպրոցական շրջանում զուրկ են մնում այդ կենսական պահանջից. դպրոցը ոչ միայն չէ օգնում երեխաների բնական զարգացմանը, նրանց մէջ չէ զարթեցնում գիտակցութիւն, հետաքրքրութիւն դէպի շրջապատող բնութեան երևոյթները, նրանց չէ նախապատրաստում բուն կեանքի համար, այլև մի քանի նատրիններ գրքերով ու տետրակներով զբաղեցնելով՝ աւելի լայն անջրպետ է բանում մանուկի ու իր շրջապատող աշխարհի մէջ։ Ճիշտ է, դպրոցը սովորեցնում է գրել-կարդալ, աշխատում է երեխայի մէջ մտցնել որոշ սերմեր, բայց այդ սերմերը ըստ մեծի մասին ծիլ չեն տալիս, խեղդվում, փչանում են առաջին պատահարից, որովհետև հիմնված չեն լինում փորձնական կամ գործնական հիմունքների վրա և մանուկի մտաւոր հորիզոնը այնքան սահմանափակ է, նրա մէջ առաջխաղացութեան ինքնուրոյն զարգացման կորիզը, եթէ կարելի է այսպէս ասել, այնպիսի պայմաններով է շրջապատված, որ ծիլ չէ տալիս, ոստեր ու արմատներ ձգում, այնպէս որ դպրոցական կրթութիւնը իր նպատակին չէ ծառայում հերիք չէ, այլ և շատ անգամ անորոշ վիճակի մէջ է դնում երեխայի ապագան։ Նա ոչ կապում է այն միջավայրի հետ, որի մէջ ծնունդ է առել, սնվել, մեծացել և ոչ էլ այնքան պաշար է տալիս, որ ուրիշ մթնոլորդ ընտրելով կարողանայ շուտով իրան խորթ ու անծանօթ կեանքին յարմարվել. և դրա հետևանքը լինում է մեր գիւղացու անտեսական անկումը, նրա բարոյական ու ֆիզիքական այլասեռումը։ Գիւղական տարրական դպրոցը իր սահմանափակ ծրագրով չէ կարող գիւղացու պահանջներին գոհացումն տալ, նա միայն գրել ու կարդալ է սովորեցնում և աւելի ոչինչ, և այդ ուսումը դպրոցից դուրս գալուց յետոյ մեծ մասամբ մոռացվում է։ Բայց գրել-կարդալ սովորեցնելով՝ չես կարող գիւղացու դրութիւնը փոխել, նրան հաց է հարկաւոր, սահմանափակ մտաւոր սնունդը նրա փորը չէ կշտացնում, նրա անհամար ցաւերին դարման լինում։

Ճիշտ է, գիւղացին սկզբում ոգևորվում է դպրոցական հարցով, համակրանքով վերաբերվում այդ հիմնարկութեան, նպաստում իր կարողութեան չափ, բայց մի քանի ժամանակից յետոյ նա թուլանում է, սառչում, ինչու որ դպրոցը իր երևակայած արդիւնքը չէ տալիս բաւական չէ, այլ և իրանից խլում է իր օգնականը, իր տղան, որ հանդում կարող էր իր հորթը արածացնել կամ գութանում հօտաղ դառնալ։

Այո, կար ժամանակ, երբ մեր գիւղական ընտանիքը 20, 30 և աւելի հոգուց էր բաղկացած, մի քանի եղբայրներ, որդիք, թոռներ մի յարկի տակ միասին էին ապրում, իրանց վար ու ցանքը, դրսի ու ներսի աշխատութիւնները ընտանիքի բոլոր անդամներն էին կատարում, ռաշպար, հօտաղ, ծառայ բռնելու կարիք չէին զգում և նա գոհ էր իր վիճակից, ամեն բանի առատութիւն էր, պարենական մնացած արօրն ու գութանը, մի քանի կթանները կշտացնում էին բոլորին և դեռ գիւղացին արտահանում էր աւելորդը կամ սև օրվայ համար ամբարում։ Այդպիսի ընտանիքը իր տան աւելորդ անդամներին քաղաք էր ուղարկում որևէ սովդաքեարի մօտ շըլլըղ անելու, կամ որևէ վարպետի մօտ արհեստ սովորելու և կամ թէ դպրոց էր տալիս ուսում առնելու, մարդ դառնալու, առանց աչք ածելու, որ մի օր նա իրան պէտք կը գայ։ Այդպիսի ընտանիքը իսկապէս մեծ ոյժ էր ներկայացնում և մենակ մաքառում վերահաս չարիքի դէմ։ Բայց այդ այն ժամանակն էր, երբ կար մի օջախ, որ կապում էր ինչպէս մի ընտանիքի անդամներին իրար հետ, այնպէս էլ գիւղական համայնքին. այդ օջախը դէպի է միմեանց ունեցած հաւատն էր, միմեանց հետ կապող սէրը, յարգանքը, միմեանց թևսիր քաշելը, նեղ օրերին փոխադարձ օգնութիւնը։

Այժմ պատկերը փոխված է. հայ գիւղը այն չէ, ինչ որ մի քանի տարի առաջ, փոխված են ընտանեկան կազմը, նիստ ու կացի եղանակը, շրջապատող պայմանները, ոչ միայն չը կան նահապետական մեծ օջախները, այլ և հազուագիւտ են 10—15 հոգուց բաղկացած ընտանիքները։ Մի հօր զաւակները միասին չեն ապրում հերիք չէ, այլ և շատ անգամ տեսնում ենք նրանց լարված դրութեան մէջ, միմեանց հակառակ, միմեանց թշնամի։ Ընտանիքի բաժան-բաժան լինելուց՝ հայքի, գոյքի, հողի ևս բաժան լինելուց՝ մեծ տնտեսութ՛ւնը մանրանալով՝ այլես չէ գոհացնում ոչ մէկին։ Այդպիսի տնտեսութիւնը գնալով քայքայվում է, գիւղացին պարտքերի տակ ճնշվում, որովհետև մենակ մնալով՝ աշխատութեան մեծ մասը ուրիշի ձեռքով է կատարում. նա վարձում է և հօտաղ, և հնձւոր, և կալւոր, որոնց պէտք է վարձատրէ կամ իր բերքից որոշ մաս հանէ՝ ուղղակի տան անդամների բերնից կտրելով։ Աստուած չանէ, որ անօգնական գիւղացին հիւանդանայ կամ նրա լծկանը սատկէ, կարկուտը, մորեխը, երաշտը, ցրտահարութիւնը, հեղեղը, այս ու այն պատուհասը վրա հասնէ. կանգնում է նրա տնտեսութեան մեքենան, աղքատութիւնը լայն փռում իր թևերը այդպիսի տան վրա և կամաց-կամաց անխուսափելի դառնում աւերումն ու քայքայումը։ Հարկ կայ ասելու, որ այդպիսի վիճակում նա ոչ միայն չէ կարողանում իր հասարակական պարտականութիւնները կատարել, ուսման, դպրոցի վրա մտածել, այլ և իր տնտեսութեան մէջ թէկուզ մի աննշան բարեփոխութիւն մտցնելու վրա աչք դնել։ Այո, հացի խնդիրը խեղդում է ամեն բան։ Ով շատ ու քիչ ծանօթ է գիւղական կեանքին, նկատած կը լինի, թէ ինչ սոսկալի խեղճութիւն է տիրում այնտեղ։ Հեշտ է ասել խեղճութիւն, բայց պէտք է տեսնել, զգալ, որ հասկանալի լինի այդ։

Մեր գիւղերը հետզհետէ դատարկվում են. վաշխառութիւնը մի կողմից գլուխը բարձրացնում թոյլերին պատուանդան շինում, միւս կողմից օտարի մրցումը, երրորդ կողմից կալուածատէրերի ճնշումը փորփորում նրա գոյութեան հիմունքները. աշխատաւոր դասը, երիտասարդ ուժերը փոխանակ մայր հողի հետ կապվելու, յուսահատ թողնում հեռանում են օտարութիւն, թերևս աւելի չարքաշ, աւելի տաժանելի աշխատութիւն սկսում, իրանց ընտանիքը մի կերպ ապրեցնելու։

Ի՞նչ միջոց գործ դնել գիւղացու տնտեսական դրութիւնը բարձրացնելու, որ նա կարողանայ իր քրտինքի վաստակով իր առօրեայ պէտքերը լցնել և այդպիսով նրան կապել մայր հողի հետ. ահա խնդիր, որ այժմ ամեն բանիմաց հայի աւելի պիտի զբաղեցնէ, քան մի շարք երրորդական տնտեսական խնդիրներ։

Մեր նպատակը չէ այստեղ խօսել տիրապետող օրէնքների պակասաւոր կողմերի մասին հողատիրական խնդիրների վերաբերութեամբ, կը թողնենք և սակաւահողութեան ու հողաբաժանութեան կնճռոտ խնդիրները, ուղղակի և անուղղակի հարկերի մասին խօսելը, բերքի մէկ քառորդ կամ մէկ հինգերորդ մասը կալուածատիրոջ տալու և այլ պարտականութիւններ կատարելու վերաբերութեամբ, այսպէս և ջրաբաժանութեան, արօտատեղի, գիւղացու այդ կենսական նշանակութիւն ունեցող խնդիրների մասին հարց բարձրացնելը, որոնք երկար և լուրջ ուսումնասիրութեան նիւթեր են և որոնց լուծումը մեր իրաւասութիւնից բարձր է, դառնանք այն խնդրին, որ մեր կարծիքով ներկայ համագումարի և դպրոցական ծրագիրը կազմող յանձնաժողովի ուշադրութեան արժանի խնդիրներից մին պիտի լինի։

Հողը, որ հայ գիւղացու ապրուստի գլխաւոր աղբիւրն է կազմում, դարեր շարունակ միևնոյն հացաբոյսերի համար մշակվելով, թուլացել, կորցրել է իր արդիւնաւէտութիւնը և գիւղացուն անյայտ են ուժասպառ հողերի վերականգնելը։ Նա անհագին ֆիզիքական աշխատութիւն է գործ դնում. գութանելու, տափանելու, հնձելու, կալսելու վրա— նա չը գիտէ, տեղեկութիւն չունի գիտութեան հարթած ճանապարհների մասին—կատարելագործված մեքենաների, գործիքների, որոնք եռապատիկ հեշտացնում են աշխատութիւնները։ Նա գաղափար չունի պարարտացուցիչ նիւթերի մասին, նա չը գիտէ, որ մի կտոր հողը սերմնափոխութեամբ առանց յոգնեցնելու, առանց հանգիստ տալու կարելի է շարունակ մի քանի տարիներ մշակել և արդիւնաբերել։ Հիւանդանում է գիւղացու եզը, կովը, ձին, այգին ու ցանքսը վարակվում այս ու այն հիւանդութեամբ, թրթուրը խժռում պտղատու ծառերը, գինին փոխում իր բնական համը, գոյնը, շերամի որդը ենթարկվում հիւանդութիւնների և այլն և այլն, և նա մնում է շուարված, նա չը գիտէ դիմադրել, չը գիտէ նրանց առաջը առնել։ Գիւղացին առատ տարիներին չը գիտէ իր բերքից շահվելու եղանակը—նրան անյայտ են շուկաները, սպառելու տեղերը։ Նոր սերմ է լոյս ընկել, նոր տունկ, նոր գործիք, նոր պահանջ, նա չը գիտէ այդ. մէկը չը կայ, որ նրան հասկացնէ, ծանօթացնէ անտեսութեան հեշտ միջոցների, այս ու այն նոր գիւտի, նոր փորձի ու մեքենայի հետ. և այս դրութիւնը ձիգ տարիներ շարունակվել են և մենք հեռուից միայն թամաշաչու դեր ենք կատարել և շատ ժամանակ դատափետել գիւղացուն, որ նա ծոյլ է, անընդունակ է, որ այսպէս է, այնպէս է։

Ցաւելով պիտի խոստովանենք, որ մինչև այսօր հայ երիտասարդութիւնը, որ ձգտում է պրօլետարիատի աշխատութիւնը թեթեւացնել, ոչ մի գործնական քայլ չէ արած գիւղացու վիճակը թեթեւացնելու. ամեն օր լսում ու կարդում ենք խօսքեր—գիւղ, գիւղացի, հող, կալուածական խնդիր, բայց գիւղացիութիւն, բուն հացի խնդրի մասին ոչ ոք չէ մտածում. մինչև այսօր մէկն ու մէկը չը մտաւ հայ գիւղացու խրճիթը, չուսումնասիրեց նրա նիստ ու կացը, նրա տնտեսութեան մշակութեան եղանակը, չը բացատրեց այս ու այն մեքենայի, գործիքի առաւելութիւնները, չը հասկացրեց գիւղացուն, որ փոխուել են մեր կեանքի պայմանները, դրսի աշխարհի հետ ընդարձակվել մեր յարաբերութիւնները, ստեղծվել նոր պահանջներ և նա գիւղացին պէտք է յարմարեցնէ իր կեանքի պայմանները նորերին, բարեփոխէ ինչոր կարելի է և անհրաժեշտ է բարեփոխել, նոր հունանք, նոր ուղղութիւն մտցնէ ինչպէս մշակութեան եղանակի, նոյնպէս և մշակվող բոյսերի մէջ առաջնորդ ունենալով գիտութիւնը, օտարազգիների ու մեր հարևանների նոյն ասպարէզում ունեցած փորձերի հետևանքը։ Չէ՞ որ գիւղացին որչափ գիտակցաբար վերաբերվի իր գործին, որչափ նա գիտութեան տուած փորձերով զինված լինի, որչափ նա իրական կեանքի պայմաններին ու պահանջներին ծանօթ, այնքան նա դիւրութեամբ կը մաքառէ առաջ եկող չարիքների ու հարուածների դէմ և կարող կը լինի իր տնտեսութեան այս կամ այն ընթացքը տալ կամ իր նպատակին հասնելու համար այս կամ այն միջոցը ընտրել։ Կարմրելով պիտի խոստովանենք, որ ոչ մի ուշադրութիւն չենք դարձրել գիւղացու տնտեսական դրութիւնը բարւոքելու, մինչև այսօր չունենք ոչ մի լուրջ ուսումնասիրութիւն նրա տնտեսական վիճակի վերաբերմամբ, չունենք ոչ մի գիւղատնտեսական թերթ և ոչ գիւղատնտեսական գրականութիւն։

Մեր Կովկասը, որ իր հողային ու կլիմայական պայմանների շնորհիւ ուրիշների նախանձն է շարժում ու ախորժակները գրգռում, իր հարազատ զաւակների համար խորթ մօր դեր է կատարում և շատերը փախուստ են տալիս նրանից։

Ժամանակ է վերջապէս վերջ դնել աննորմալ դրութեանը, ժամանակ է վերջապէս գիւղատնտեսական տարրական գիտելիքները ընդհանրացնել մեր ժողովրդի մէջ։ Ժամանակ է որ մեր գիւղական դպրոցները լոկ գրել կարդալ չըսովորեցնէին գիւղացի մանուկին, այլև մատիտ ու գրչի հետ բահ ու բրիչ, մուրճ ու կացին, արօր ու գութան, մանգաղ ու գերանդի բանեցնել, չոր ու ցամաք բառախաղութիւնների փոխարէն՝ շերամապահութիւն, մեղուապահութիւն, այգեգործութիւն, պարտիզպանութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն և այլ ճիւղեր սովորեցնել, որոնք ժողովրդի ապրուստի աղբիւրներն են կազմում։

Այդ ժամանակ գիւղական երեխան, ապագայ երկրագործը աշակերտական նստարանից կը վարժվէր գործնական աշխատանքի, նրա պիտի մտաւոր հորիզոնը աւելի կընդարձակվէր, դպրոցում ստացած տարրական գիտութիւնը նա օգտակար կերպով կը գործադրէր ապագայում իր հանդում, իր ագարակում, նա կըշահագործէր հողը և ոչ իր նման մարդիկ։ Այդ ժամանակ դպրոցը իր արժանաւոր տեղը կը բռնէր գիւղացու աչքում, նա իր վերջին կօպէկը չէր խնայի բարեկարգութեան և պահպանութեան, ինչու որ նրա մէջ կը գտնէր իր նեցուկը, իր տնտեսական վիճակի բարւոքման յենակէտը։

Այժմ հարց—որտեղից առնել գիւղատնտեսութեան գիտակ այդքան ուսուցիչներ, ինչպէս կազմակերպել դպրոցական գործը, որ իր նպատակին հասնէ, բացի դպրոցը կա՞ն և այլ միջոցներ գիւղատնտեսական գիտելիքները ընդհանրացնելու։

Մեր կարծիքով քանի որ Ռուսաստանի գիւղատնտեսական դպրոցները իրանց կազմակերպութեամբ չեն կարող գոհացումն տալ Կովկասի բոլոր պահանջներին, ինչու որ մեզանում կլիմայական պայմանները ուրիշ են, մշակվող բոյսերը և գիւղատնտեսութեան ճիւղերը բազմազան և մշակութեան ու արդիւնաբերելու եղանակը ունի իր առանձնայատկութիւնները և ամենքին մատչելի չեն այդ դպրոցները, պէտք է աշխատել ամենից առաջ բանալ մեզանում գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց եռամեայ դասընթացով, Կովկասում գոյութիւն ունեցող գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերը տեսականապէս ու գործնականապէս անցնելու և այնպէս նախապատրաստելու դասընթացը աւարտողին, որ 1) նա կարողանայ իբրև ուսուցիչ դասախօսել գաւառական երկդասեան մի դպրոցի կից բացվելիք գիւղատնտեսական բաժնում 2) որ նա իբրև շրջիկ գիւղատնտես կարողանար ղեկավարել այս ու այն շրջանի գիւղական դպրոցների ուսուցիչներին դպրոցական պարտէզներ կամ ագարակներ բանալու մէջ, 3) որ նա ընդունակ լինի գիւղական ժողովրդին դասախօսելու և գործնականապէս ցոյց տալու այն ամեն մանր կէտերը, որոնք կապ ունեն նրա տնտեսութեան հետ։

Այդպիսի գիւղատնտեսական եռամեայ դասընթացը, մեր կարծիքով, աւելի նպատակայարմար է Էջմիածնում ունենալ, աչքի առաջ ունենալով, որ ճեմարանի սաները այլ և այլ գաւառներից եկած լինելով, իրանց վերադարձին գործելու լայն ասպարէզ կունենան, իսկ գիւղատնտեսութեան և հէնց տնտեսական տեսակէտից Էջմիածինը ամենից յարմար կենտրոնն է ներկայացնում և շատ առաւելութիւններ ունի, քան մեր միւս գաւառները։ Գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցը պիտի ունենայ իր ձեռքի տակ՝ 1) ընդարձակ հող 5—10 դեսեատին տարածութեամբ, այս ու այն բոյսերի մշակութեան համար, 2) 2—3 դես. հող, որ պիտի ծառայէ իբրև փորձնական ագարակ ուսուցիչների համար, 3) պիտի ունենայ խաղողի վաղի մշակութեան ընտիր տեսակներ, 4) մրգաբեր այգի և տնկարան, 5) շերամատուն և թթենիներ, 6) մեղուանոց, 7) գինետուն և մառան, 8) կաթնատնտեսութիւն և անասնապահութիւն (ընտիր կովեր, ցուլ՝ սերունդը ազնուացնելու, 9) թռչնապահութիւն, 10) բանջարանոց, 11) ջերմանոց, 12) գիւղատնտեսական մուզէյ, 13) օդերևութաբանական կայարան, 14) գիւղատնտեսական գրադարան, 15) բնագիտական և քիմիական կաբինէտ, 16) պահեստ պարարտացուցիչ և բժշկական նիւթերի և երկրագործական գործիքների, և 17) գիւղատնտեսական թերթ ու, որ անհրաժեշտ են այդպիսի մի բարձրագոյն դպրոցի համար և այդ վերոյիշեալների մեծ մասը արդէն կայ Էջմիածնում և կարելի է թեթև ծախսերով բարեփոխել եղածը, այն ինչ ուրիշ կենտրոն ընտրելով, ամեն բան նոր պիտի ստեղծվի։

Բացի մի բարձրագոյն դպրոց ունենալը, անհրաժեշտ է և ամեն հայաբնակ գաւառում մի-մի գիւղատնտեսական երկամեայ դասընթացով դպրոց ունենալ, որը զբաղվի գաւառի առանձին կամ կից երկդասեան դպրոցին։ Գաւառական այդպիսի դպրոցում պիտի աւանդվեն գաւառի մէջ գոյութիւն ունեցող գլխաւոր ճիւղերից երկուսը երեքը, նայելով իր նիւթական միջոցներին։ Այդպիսի դպրոցը միաժամանակ պիտի ծառայէ իբրև վարժոց՝ այն տղաներին, որոնք նոյն գաւառի շրջանի տարրական դպրոցը աւարտելով կը ցանկանան աւելի կատարելագործվել իրանց ընտրած մասնագիտութեան մէջ։

Այն անձինք, որոնք գաւառական գիւղատնտեսական դպրոցը կաւարտեն և կունենան երկդասեան դպրոցի վկայական, կը նշանակվեն նոյն շրջանի գիւղական տարրական դպրոցի ուսուցիչ, որ և կը վարեն դպրոցի պարտէզի կամ ագարակի կառավարչի պաշտօնը։

Գաւառական դպրոցը ևս պիտի ունենայ իր ագարակը 2—5 դես. տարածութեամբ, ուր օրինակելի ձևով պիտի մշակվեն գաւառում գոյութիւն ունեցող բոյսերն ու տունկերը կամ այս ու այն գիւղատնտեսական ճիւղը այնպէս պիտի դրված լինի, որ կարողանայ իր շրջանի տարրական դպրոցներին մատակարարել ընտիր սերմեր, տունկեր, պատուաստացուներ և այլ նիւթեր, ինչպէս որ բարձրագոյն դպրոցը իր կողմից պիտի մատակարարէ գաւառական դպրոցներին։

Ամեն հայաբնակ գաւառի շատ ու քիչ աչքի ընկնող գիւղ իր տարրական դպրոցը պիտի ունենայ, ուր գործնական պարապմունքները առաջին տեղը պիտի բռնեն և գիւղատնտեսական գիտելիքները, բնական պատմութիւնը գրոյցների ձևով պիտի աւանդվեն, այն չափով, ինչ չափով մատչելի է երեխայի հասկացողութեանը։

Տարրական դպրոցին կից պիտի ունենալ պարտէզ կամ ագարակ պակասը 600—1200 քառակուսի տարածութեամբ, ուր աշակերտները ուսուցչի ղեկավարութեամբ մշակում են այս ու այն բոյսը, ծառը, տունկը, ծաղիկը կամ բանջարը, հետևում նրանց աճելութեան, անում իրանց դիտողութիւնները և վարժվում գործնական աշխատանքի։ Դպրոցը, եթէ յարմարութիւն ունի, պիտի ունենայ շերամատուն և մեղուանոց։ Այդպիսի ագարակներից ոչ մի նիւթական շահ չը պիտի սպասել. բաւական է, որ նրանք իրանց մանկավարժական նպատակին ծառայեն—մանուկի մէջ շրջահայեցողութիւն զարգացնեն ու վարժեցնեն աշխատանքի ու տոկուն մարդիկ պատրաստեն։

Այդ երեք կարգի դպրոցների ծրագիրը այնպէս պիտի կազմվի, որ միդասեան դպրոցը աւարտողը կարողանայ մտնել երկդասեան դպրոցի համապատասխան դասարանը, այնպէս էլ երկդասեան դպրոցը աւարտողը ճեմարանի։ Բնական գիտութիւններին կարծիք չը կայ, որ առաջնակարգ տեղ պիտի տրվեն և որչափ հնարաւոր է տեսականապէս անցածը գործնականապէս ևս պիտի ցոյց տրվի թէ ագարակում և թէ շրջակայքում էքսկուրսիաների ժամանակ։

Բացի գիւղատնտեսական դպրոցներն ու ագարակները, ոչ պակաս կը նպաստեն գիւղատնտեսութեանը մեր մէջ ընդհանրացնելուն և կենդանի խօսքը շրջիկ գիւղատնտեսների միջոցով, գիւղատնտեսական թերթերն ու գրքերը, որ մատչելի պիտի անել իրանց բովանդակութեամբ գիւղատնտես ուսուցիչների և գիւղականների ժողովները տնտեսական խնդիրների վերաբերութեամբ և գաւառական ցուցահանդէսները տեղական բերքերի ու գիւղատնտեսական գործիքների։

Մեր գիւղացին, ճիշտ է, յամառ է շուտով որևէ նորամուծութիւն ընդունելու, մանաւանդ գործադրելու, բայց երբ նա իր աչքով կը տեսնէ նորի առաւելութիւնները և ձեռներով կը շօշափէ ու կը համոզվի, որ իրօք դպրոցը, ուսուցիչը, շրջիկ գիւղատնտեսը աշխատում են բարելաւ վիճակի մէջ դնել իր տնտեսութիւնը, այն ժամանակ նա հոգով կը նուիրվի իր գործին, սիրով կը կապվի հողի հետ և շատ չի քաշի, մեր երկրի տնտեսական դրութիւնը կը բարձրանայ և ամենքը կը գտնեն նրա մէջ իրանց նիւթական ապահովութիւնը։ Առանց գիւղատնտեսական գիտութիւնները ընդհանրացնելու, կրկնում ենք, մեր գիւղական ժողովրդի տնտեսական դրութիւնը չի բարւոքվի և չի կապվի նա մայր հողի հետ, որ նրա գոյութեան յենակէտն է։

Կ. Կ. Մելիք Շահնազարեանց

«ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ»

(Կաուցկի)

I

Անմիջական օրէնսդրութիւնը նախնական ժամանակներում.

Ժողովրդային անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները սիրով օրինակ են բերում նախնի ժամանակները։ Նամանաւանդ նրանք օրինակ են բերում գերմանացիներին, ինչպէս որ նրանց նկարագրել են Տացիտը և Ցեզարը, և խիղյն նկարագրում են այն հասարակական կազմակերպութեան ազատ ու երջանիկ պայմանների պատկերը, որ գոյութիւն ունէր մինչ այն ժամանակ, երբ պատմութեան ընթացքը վերջ դրեց ժողովրդային անմիջական օրէնսդրութեանը։ Քննենք մենք էլ այդ ժամանակները։ Քննելով ժողովրդային օրէնսդրութեան հիմունքները և նրա անկման պատճառները, մենք միևնոյն ժամանակ մեզ համար կը պարզենք և մի քանի այնպիսի հանգամանքներ, որոնք կարևոր են հասկանալու համար և ներկայումս կատարվող շարժումը յօգուտ ժողովրդային օրէնսդրութեան։

Ժողովրդային օրէնսդրութեան մասին, այս բառի իսկական իմաստով, խօսք էլ չէ կարող լինել Ցեզարի ժամանակվայ գերմանացիների մօտ, ինչպէս և այլ ժողովուրդների մօտ, որոնք կուլտուրական զարգացման նոյն աստիճանի վրա էին կանգնած. Զարգացման այդ աստիճանում դեռևս օրէնքներ գոյութիւն չունէին։ Նախկին գերմանացիների ժողովրդային ժողովների դերը շատ քիչ է նմանում այն բանին, ինչ հիմա օրէնսդրութիւն է անուանվում։ Իսկապէս, ցեղի ազատ զինւորների ժողովը իրանից բարձրագոյն ատեանն էր ներկայացնում վճռելու համար այն բոլոր գործերը, ինչ որ ցեղին էր վերաբերում։ Այդ ժողովը պաշտօնեաներ էր ընտրում, դատում էր յանցաւորներին, լուծում էր ցեղի անդամների մէջ ծագած վէճերը, որոշում էր ցեղի յարաբերութիւնները դէպի ուրիշ ցեղերը և այլն։ Որովհետև այն ժամանակվայ հասարակական յարաբերութիւնները անփոփոխ էին մնում հարիւրաւոր տարիների ընթացքում, ուստի և ցեղի քննութեանը ներկայացված գործերն էլ առհասարակ նոյնանման էին։ Այդ պատճառով էլ գործերը վճռելու ժամանակ ժողովներում մեծ դեր էին կատարում սովորութիւնները և ցեղի ծերերը, որոնք իրանց յիշողութեան մէջ լաւ էին պահել սովորութիւնները։

Ինչպէս որ ամբողջ ցեղին վերաբերեալ գործերի համար բարձրագոյն ատեանը ցեղային ժողովն էր, այնպէս էլ ցեղի մի որևէ մասի համար բարձրագոյն ատեանը այդ մասի զինւորների ժողովն էր համարվում։

Եթէ մենք քննենք զարգացման աւելի առաջ եկած աստիճանը, այն աստիճանը, օրինակի համար, որի վրա կանգնած էին Հիւսիսային Ամերիկայի հնդիկները, Ամերիկան գտնելու ժամանակ, մենք կը տեսնենք, որ այստեղ աւելի դեմոկրատական կարգեր կային. այստեղ կանայք էլ իրաւունք ունէին ժողովրդային ժողովներում մասնակցելու։

Այսպէս ուրեմն, Ցեզարի և նոյն իսկ Տացիտի ժամանակների գերմանացիների մօտ, որոնց մեծ մասամբ օրինակ են բերում ժողովրդային անմիջական օրէնսդրութեան կողմնակիցները, «ժողովուրդ» բառի հասկացողութիւնը արդէն սահմանափակված էր։ Այդ հասկացողութեան մէջ մտնում էին միայն տղամարդիկ և այն էլ ոչ բոլորը, առանց բացառութեան. այստեղ-այնտեղ մենք պատահում ենք և ոչ ազատ տղամարդկանց, որոնք զրկված էին քաղաքական իրաւունքներից։

Արդ՝ ինչպէս պատահեց, որ կանանց դուրս գցեցին ժողովրդի միջից։ Այդ հարցի սովորական պատասխանը բնութեան թէօրիան է, որի միջոցով շատ սիրում են բացատրել ըստ մեծի մասին ամեն մի հարստահարութիւն, կատարված մի դասակարգի ձեռքով միւսի վերաբերեալ. տղամարդիկ, իբրև աւելի ուժեղներ, հպատակեցրել են կանանց։ Այս բացատրութիւնը կարելի է թոյլ տալ—եթէ ներկայ կարգերի կողմնակիցներից ոմանք ընդունում են այդ թէօրիան — իբրև եզրակացութիւն Դարվինի թէօրիայի։ Եւ որովհետև առանձին ինդիվիդների մէջ եղած ոյժի ու մտաւոր ընդունակութիւնների անհաւասարութիւնը միշտ եղել է և, հաւանական է, որ միշտ էլ կը լինի, ուստի այդ թէօրիան ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ այն, որ հասարակական անհաւասարութիւնների հիմքը հէնց բնութեան մէջ գոյութիւն ունի և այդ անհաւասարութիւնները կը մնան մշտապէս։ Ամենաշատը այն կարող է լինել, որ դրանք իրանց ձևերը միայն կը փոխեն։ Բնութեան թէօրիայի այս եզրակացութիւնները ի նկատի առնելով, բոլորովին անհասկանալի է դառնում, թէ ինչու դասակարգային անհաւասարութիւնների հակառակորդները այդ թէօրիային գերակշիռ նշանակութիւն են տալիս։ Բնութեան թէօրիան ոչ միայն մխիթարական չէ, այլ և ոչինչ չի էլ պարզում։ Եթէ մենք կարող ենք այդ թէօրիայից այնպիսի եզրակացութիւն անել, որ դասակարգային անհաւասարութիւնների հիմքը հէնց բնութեան մէջ է, որ այդ անհաւասարութիւնները մշտնջենական են, ուրեմն աւելի հեռուն գնալով, մենք կարող ենք այն եզրակացութեանը յանգել, որ անհաւասարութիւնները միշտ գոյութիւն են ունեցել այն ժամանակից ի վեր, ինչ մարդկութիւնը գոյութիւն ունի։ Մինչդեռ, մենք գիտենք, որ այդ ճիշտ չէ։ Մենք նոյն իսկ աւելին գիտենք. գիտենք, որ նախնական հաւասարութիւնը միայն կամաց-կամաց տեղի է տուել անհաւասարութեանը, և որ այդ ուղղութեամբ կատարված ամեն մի քայլը համապատասխան է եղել կուլտուրական զարգացման մի որոշ աստիճանին։ Աւելի ուժեղների և նուազ ուժեղների, աւելի ընդունակների և նուազ ընդունակների միջև եղած տարբերութիւնները միշտ եղել են և կը լինեն, և դրանք երբէք չեն կարող պարզել, թէ ինչու բոլոր ժողովուրդների մէջ, այս կամ այն կուլտուրական աստիճանում, այս կամ այն, իբր թէ, աւելի ուժեղ և խելօք մարդկանց խումբը պահանջ է զգացել հպատակեցնել աւելի յիմարներին ու թոյլերին և թէ ինչու այդ բանը աջողվել է անել հէնց այս ինչ զարգացման աստիճանում։ Այդ բացատրութիւնը պէտք է փնտռել, ի հարկէ, ոչ թէ «մարդու բնութեան» մէջ, այլ կուլտուրական զարգացման աստիճանի առանձնայատկութիւնների մէջ։ Միմիայն այդ առանձնայատկութիւնները, և ոչ թէ բնութեան թէօրիան, կարող են մեզ բանալի տալ հասկանալու այն դասակարգային անհաւասարութիւնները, որ առաջ են եկել այս կամ այն ժամանակ։

Բայց կուլտուրական զարգացման իւրաքանչիւր աստիճանի առանձնայատկութիւնների հիմքը կազմում է այդ աստիճանին յատուկ արդիւնաբերական եղանակը։ Այս վերջինովն են բացատրվում զանազան դասակարգերի կատարած յատուկ հասարակական ֆունկցիաները, իսկ իւրաքանչիւր դասակարգի կատարած ֆունկցիան որոշում է նրա դերը հասարակութեան մէջ։

Աշխատանքի առաջին բաժանումը, որ մենք նկատում ենք պատմութեան մէջ, տեղի է ունեցել տղամարդի և կնոջ միջև։ Վայրենիութեան բարձր աստիճաններում միայն սկսեց զարգանալ տնային կեանքը և տնային գործեր վարելը կնոջը բաժին դարձաւ։ Տանից դուրս պէտքերը հայթայթելը աւելի ու աւելի տղամարդի բացառիկ գործը եղաւ։ Մենք կարող ենք միայն ենթադրութիւններ անել, թէ ինչ պատճառներ են ազդել այդ հանգամանքի վրա։ Բարբարոսութեան ամբողջ երկար ժամանակաընթացքում տեխնիքական առաջադիմութիւնը գլխաւորապէս կատարվում էր տնային աշխատանքների շրջանում, որոնց կատարողները կանայք էին։ Այդ պատճառով էլ կանանց աշխատանքի շրջանը բաւականին մեծացաւ։ Այն ժամանակներում թէ խաշնարածութիւնը և թէ հողագործութիւնը, որոնք դեռ ևս սաղմային դրութեան մէջ էին գտնվում, կանանց աշխատանքի շրջանի մէջ էին մտնում։ Յետոյ այդ շրջանի մէջ էին մտնում և հում նիւթերից շատերի պատրաստութիւնը, հիւսվածքներ կատարելը, ջուլհակութիւնը, կաւէ ամաններ պատրաստելը և այլն։ Մի քանի ցեղերի մէջ մինչև իսկ տուն շինելու դժուարին գործն էլ բացառապէս կանայք էին կատարում։

Իսկ տղամարդկանց աշխատանքները բարբարոսութեան շրջանում շատ աննշան չափով և կամ բոլորովին չէին աւելանում։ Տղամարդիկ մնում են նոյնը, ինչ որ առաջ էին.—զինւորներ և որսորդներ։ Այն տեղերում միայն, որտեղ խաշնարածութիւնը մեծ ծաւալ է ընդունում, տղամարդիկ էլ սկսում են արդէն այդ գործով զբաղվել, բայց այդ էլ միայն երիտասարդութիւնն է անում, որոնք դեռ զինւոր լինելու հասակին չեն հասել։ Զարմանալու ոչինչ չը կայ, եթէ զարգացման այդ աստիճանում կինը, տղամարդու համեմատութեամբ, մի տեսակ բեռնակիր կենդանի է դառնում։ Նա այնչափ բեռնաւորված է աշխատանքով, որ ժամանակ չէ մնում հասարակական գործերով զբաղվելու համար։ Բացի դրանից, նա չէ կարող երկար ժամանակով տանից բացակայել, որովհետև նրա ներկայութիւնը տան մէջ անհրաժեշտ է ամեն օր, նոյնիսկ ամեն ժամ։ Այդ պատճառով էլ, բարբարոսութեան շրջանի ընթացքում, կինը աւելի ու աւելի հեռանում է հասարակական կեանքից և հասարակական գործերին մասնակցում է միայն տղամարդկանց—իբրև իր ներկայացուցիչների—միջոցով, և վերջն էլ այլևս բոլորովին չէ մասնակցում։

Տղամարդը բոլորովին այլ դրութեան մէջ է գտնվում։ Նրա ներկայութիւնը տանը անհրաժեշտ չէ, նա կարող է բացակայել ամբողջ օրեր և շաբաթներ, և դրա պատճառով նրա տնտեսութիւնը ոչ մի վնաս չի կրի։

Եւ կուլտուրական զարգացման այդ աստիճանում տղամարդը կարող է իր ամբողջ ժամանակը հասարակական կեանքին նուիրել, ինչպէս նա անում էր վայրենութեան ժամանակաշրջանում. եթէ միայն կարելի է ասել, թէ այդ շրջանում հասարակական կեանք կար։ Բարբարոսութեան աւելի բարձր աստիճանում տղամարդը շատ աւելի ազատ ժամանակ ունի, քան առաջներում, շնորհիւ այն հանգամանքի, որ կնոջ աշխատանքը շատացել է և, այդ ժամանակներում, երբեմն արդէն օգտվում են և ստրուկ օգնականների աշխատանքով։ Այսպիսով, մենք այդ ժամանակներում տղամարդկանց մէջ մի շատ վաղվաղուն, դեմոկրատական կեանք ենք նկատում, յաճախակի ամեն տեսակ ժողովներ են տեղի ունենում, որոնք ընդմիջվում են կեր ու խումերով, ժողովներ, ուր ժողովուրդը քննում ու որոշում է ամեն կարգի գործեր։

Որչափ տնային աշխատանքը քիչ էր կապում տղամարդկանց, այն չափ էլ ընդարձակ ծաւալ էր կարողանում ստանալ հասարակական կեանքը, առանց մաղչափ անգամ կորցնելու իր դեմոկրատական հիմքը—«ժողովրդային անմիջական օրէնսդրութիւնը»։ Արդիւնաբերութեան միջոցների առաջադիմութիւնը առաջուանից աւելի մեծ թւով մարդկանց էր միջոց տալիս նոյն տերրիտորիայի վրա իրանց համար ապրուստի միջոցներ գտնել։ Իսկ տնային աշխատանքներից աւելի ու աւելի անկախ դառնալը տղամարդկանց նաև միջոց էր տալիս աւելի ու աւելի հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարել ժողովրդային ժողովներում մասնակցելու համար,

Այսպիսով բարբարոսութեան շրջանում աւելի ու աւելի է ընդլայնանում ցեղի սահմանները։ Վերջապէս գործը այն տեղն է հասնում, որ շատ ցեղեր միանում և մի ժողովուրդ են կազմում, որի ժողովրդային ժողովը, ինչպէս էին ցեղի և տոհմի ժողովները, իրանից մի բարձրագոյն ատեան է ներկայացնում բոլոր հասարակական գործերի համար։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վերին-Աղդան, հոկտեմբերի 10-ին

Վերջին տարիներս հայերիս մէջ սունկի նման բուսնող ինքնակոչ ինքնակալների կամայականութիւնների մի նմուշ ես հրապարակի վրա դնելու համար խնդրեմ տեղ տաք երկտողիս։

Ես, ծերունի արհեստաւորս, 55 տարի նամուս ու պատիւ պահած, իմ հասցէին մի «չօռ» անգամ լսած չը կայի, բայց անտեղի ու անակնկալ կերպով ես և զոհ դարձայ գիւղիս ինքնակոչ «չէյխի» ամենազօր գաւազանին, որից ազատ չէ մնացում ոչ արդարը և ոչ մեղաւորը։ Գիւղը, եթէ չասեմ ողջ գաւառը, դողում է «չէյխի» ձեռքին. նա քննել, հարցնել չը գիտէ. բերանդ կուզես բաց անել, բացատրվել, վայրկենաբար գլխիդ կը տրաքի գաւազանը կամ կը շառաչի մտրակը. եթէ փորձես պաշտպանվել, աւելի կը կատաղեցնես և այն ժամանակ վայ քո հալին ու քո օրին։

Սակայն ով էլ «չէյխի» ծեծը ճաշակէր, ես գոնէ ինձ միշտ ազատ էի համարում այդ բանից, որովհետև ես ծեծվելու մարդ չեմ, ես ինձ պահել եմ պատուաւոր ու վայելուչ կերպով։ Եթէ չէյխը կենտրոնի նշանակած «խաւասուլ» է, և կայ իշխանութեան որևէ բարձր ինստանցիա, ապա խնդրեմ մարդ նշանակեցէք, հարցրէք, քննեցէք և տեսէք, թէ ես ով եմ ու ինչ արուած տէր։

Ինչ է իմ յանցանքս, ես չը գիտեմ։ Ժողովրդի մէջ կանգնած էր մեր «չէյխ»-ը, երբ ես ևս ուրիշների նման ահ ու դողով մօտեցայ նրան։ «Կորիր», որոտաց նա։ Ես, ապշած, ուզում էի պատճառը հարցնել, բայց խօսքս բերանումս սառցնելով՝ «քէօփօղլի» գոչեց և գաւազանով զինված ընկաւ ջանիս։ Ես լաւ ջարդվեցի, ամբողջս կապտավեց հարուածների տակ, բայց ոչ ոք սիրտ չարեց ազատել ինձ հզօր «չէյխ»-ի ձեռքից։ Այդ միջոցին մի կին սարսափիր լաց էր լինում իմ դրութեան վրա։

Մեր «չէյխ»-ը շատ յաճախ թայփայական վրէժներ է լուծում։ Երկար բացակայութիւնից յետոյ, երբ նա յայտնվում է գիւղամիջում, համարեա ամենքը թաքնվում են ծակ ու ծուկերում, որի ժամանակ աւերակի տպաւորութիւն է թողնում գիւղը։ Այս ամառ իմ եղբօր ուշխարները «չէյխ»-ը գնդակահար արաւ, կոտորեց գիւղի հանդում և մարսեց... Շատ շատերին է նա էշի ու գոմէշի նման վայր գցում, ծեծում, գոռոցը երկինք հանում, բայց և բոլորը մարսում է։ Մեր ազգը, իրաւ է, սովոր է ստրկութեան, բայց այս աստիճանի ստոր ստրկութիւն տանել չենք կարող։ Խեղճ Արզուման Ղարագեաղեանցը երէկ մուշտաբու էր ման գալիս. նա ուզում է տունն ու տեղը ծախել և գաղթել ընդմիշտ այս երբեմն դրախտանման աշխարհից։

Ի սէր Աստուծոյ, եթէ կայ մի այնպիսի աշխարհ, ուր կարող եմ ազատ շունչ քաշել, ուր չը կան այսօրինակ վայրենութիւններ, ուր մարդ արարածը կարող է մարդակերպ ապրել, ցոյց տուէք ինձ. ես ևս ուզում եմ գլուխս առնել, կորչել այստեղից. վախենում եմ, գուցէ աւելի մեծ փորձանքներ կան առաջիս... Չէ՞ որ «չէյխ»-ը ասաց, որ տկար է. և երբ առողջանայ, դեռ օյիններ շատ ունի խաղալու իմ գլխին։ Շատ մարդ գիւղամիջում ծեծվում է մեր «չէյխ»-ի ձեռքով, բայց ամաչում է տանը յայտնել կնոջը. իմ կինն էլ, երբ տեսաւ կապտատած մէջքս, լաց եղաւ։

Եթէ մենք էլ մարդ ենք և ապրում ենք այն տէրութեան մէջ, ուր վաղուց վերացված է մանիֆէստով ծեծը, ապա աղաչում եմ ազատեցէք մեզ այս անտեղի տուր ու քօթակից։ Եթէ Դաշնակցութիւնը դեռ օրէնք ունի և դեռ շունչ իր բերանում և եթէ այսպիսի գազանութիւնների հեղինակն ու պաշտպանը ինքը չէ, թող չը բաւականանայ ըստ սովորութեան լռել ու ականջի քամակը գցելով, այլ քննութիւն նշանակէ, յանցաւորին պատժէ. այլապէս մեր համբերութեան բաժակը անյատակ չէ և մի օր էլ կարող է լցվել։ Այսպէս խայտառակ ապրելուց աւելի լաւ է պատւով մեռնել։

Վերջացնելով խօսքս, աւելացնում եմ, որ նման բաշիբոզուկութիւնների պատճառով գործողները վաղուց կորցրել են իրանց հմայքը ժողովրդի աչքում և հաւասարվել ցեխին. այդ ճշմարտութիւնը ամենին ակնյայտնի կը դառնայ ամենամօտ ապագայում։

Երէցփոխ Վերին-Աղդանի եկեղեցու՝
Գէորգ Գէորգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի «Բայարսկայա» հիւրանոցում իջեւանած տիկին Կարնօին, որի գուշակողական արհեստի կեղծիքը և խաբեբայութիւնները երևան են հանված, ոստիկանութեան կողմից առաջարկված է դադարեցնել իր գուշակողական գործողութիւնները և հեռանալ քաղաքից։

—

Ռէալական դպրոցի 5, 6 և 7-րդ դասարանները Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ փակված են մինչև նոր կարգադրութիւն։ Ինչպէս ասում են, պատճառը եղել է այն, որ յիշեալ դասարանների աշակերտները ժողով են գումարել խորհրդակցելու թւանշաններ դնելու սիստեմը վերացնելու համար։

—

Հինգշաբթի, հոկտ. 26-ին, ցերեկվայ ժամը 2-ին բացվելու և օրհնվելու է Հաւլաբարի քաղաքային ձրի մանկաբարձական ապաստարանը, որ գտնվում է Մետէխի վերելքի վրա, Տ. Խաչատրեանի տանը։ Ընդունելութիւնը կը սկսվի նոյեմբերի 10-ից ոչ կանուխ։

—

Մոսկվայում նոր կազմակերպված առևտրա—արդիւնաբերական բորսային ընկերութիւնը առաջարկել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան իր ծառայութիւնը, ինչպէս առանձին յանձնարարութիւնների այնպէս և առևտրի, արդիւնաբերութեան, և առհասարակ տնտեսական և այլ գործունէութեան բոլոր տեսակի պաշտօնները կատարելու համար, իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատուութիւնը — ընկերութեան բոլոր դրամագլուխներով և իր անդամների գլխավոր երաշխաւորութեամբ։

—

Ստացանք Բագուից, «Արամազդ» ընկերութեան կողմից, պ. Արսէն Կրասիլնիկեանից

300 ռուբլի՝ յանձնելու պրոֆէսոր Մառրին Անիի պեղումների համար։ Այդ գումարը մենք կը պահենք պրոֆէսոր Մառրի տրամադրութեան ներքոյ։

—

Բժ. Ղազաղեանը խնդրում է մեզ յայտնել, որ «Մշակի» № 226 ում տպված Նաւէլ-Արաբիի նամակի մէջ յիշված Զրկինանց եկեղեցու ուսումնարանի կահկարասիքը յանձնված է եղել ոչ թէ Զգրաշէնի ծխական ուսումնարանին, այլ ս. Նշան եկեղեցու ուսումնարանին, որի հոգաբարձութեանը դիմել է գրաւորապէս, Զրկինանց ուսումնարանի հոգաբարձութիւնը խնդրելով վերադարձնել, բայց մինչև այսօր պատասխան չէ ստացել։

—

Մեզ հաղորդում են մի շատ տարօրինակ լուր։ Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը որոշել է դիմել և արդէն դիմել է ժողովարարութեան ի նպաստ դպրոցի չքաւոր աշակերտների։ Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցը մեր բոլոր ազգային հաստատութիւնների մէջ միակ ապահովված դպրոցն է։ Նախկին բոլոր հոգաբարձութիւնները աշխատել են միշտ կարգադրել դպրոցի ծախքերը՝ համաձայն նրա եկամուտների և այդպիսով տասնեակ տարիների ընթացքում նրանք կարողացել են հոգալ թէ դպրոցի ծախքերը և թէ օգնել չքաւոր աշակերտներին առանց դիմելու հասարակութեան օժանդակութեանը, շատ լաւ կշռադատելով որ եթէ Ներսիսեան դպրոցի պէս հարուստ և ապահովված դպրոցն ևս դիմէ հայ հասարակութեան օժանդակութեանը, հապա ինչ պէտք է անեն խեղճ և անապահով ծխական դպրոցները։ Նոր հոգաբարձութիւնը, առանց ի նկատի ունենալու դպրոցի իսկական եկամուտը, բացել է անհագին ծախքերի դուռն։ Ծախքեր անելը, ի հարկէ, շատ հեշտ բան է. դժուարը՝ նախ այդ ծախքերի համար եկամուտ գտնելն է և ապա ծախքերին ձեռնարկելը։ Հոգաբարձութիւնը չէ խղճահարվել դիմել հասարակութեան օժանդակութեանը մի այնպիսի րոպէում, երբ ամեն տեղ սով և քաղց է, ժողովուրդը տառապանքի մէջ է և պէտք է հասարակութեան ուշադրութիւնը և նուէրները յանձնել դէպի այդ կողմը։ Ներսիսեան դպրոցը ոչ մի առանձին վնաս չէր ունենայ, եթէ այս տարի ևս նա սահմանափակվէր իր եկամուտներով և մի քանի նոր ուսուցիչներ, փոխանակ Թիֆլիսում պաշտօն և չաղ ռոճիկներ ստանալու, գնային գաւառները համեստօրէն գործելու նոյն պաշտօնով։

—

Կիրակի օրը, հոկտեմբերի 21-ին, Նորաշէնի դպրոցի դահլիճում նշանակված էր Քամոյեանց եկեղեցու ծխականների ժողով։ Ժողովի զբաղմունքն էր եկեղեցու շինութեան և դպրոցի խնդիրը։ Որոշվեց դպրոցի համար ծխականների վրա կամաւոր տուրք նշանակել մինիմալ չափ դնելով 50 կոպէկ։ Դրա համար ընտրվեց մի յատուկ մասնաժողով, որին և յանձնարարվեց հոգալ այդ մասին։ Եկեղեցու հարցը մնաց առկախ։

—

Այսօր, ցերեկվայ ժամը 11-ին Հալաբարի գծի վրա կը սկսվի ելէքտրաքարշի վագոնների երթևեկութիւնը մինչև Կախեթեան հրապարակը։

—

Հոկտեմբերի 21-ին երեկոյեան ժամը 10-ին, Ակիմովսկի փողոցով անցնող Անտոն Սալամբեգովի վրա յարձակվել են 2 փոքրիկ տղաներ և դանակները ձեռքներին մահվան սպառնալիքով խուզարկել են նրան և խլելով 38 կոպէկ փող, անյայտացել են։

—

Հոկտեմբերի 21-ին ցերեկվայ մօտ ժամը 2-ին Թիֆլիսի զինուորական հիւանդանոցում ատրճանակի մի հարուածով ինքնասպանութիւն է գործել զինուորական բժիշկ Պետր Իվանովիչ Չերեպանովը։

—

Հոկտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին Անդրկովկասի երկաթուղային վարչութեան վերատեսուչի բնակարանն են (Անդրէևսկի փո. № 61) մտել 3 զինված չարագործներ և ատրճանակները ուղղելով դէպի սենեակում նստողները, փող են պահանջել։ Խուզարկելով Պավլովին, վերցրել են 15-16 ռուբլի։ Ապա չարագործներից մէկը մնացել է սեղանատանը, իսկ միւս երկուսը հրամայել են Պաւլովին ցոյց տալ բոլոր սենեակները, որի ժամանակ ննջարանում կոտրելով սնդուկը և բանալով կամօդը, չարագործները վերցրել են Պավլովի անցագիրը 3-րդ կարգի փոխառութեան տոմսակը և մօտ 300 ռուբլի փող։ Չարագործներից մէկին, ինչպէս ապացուցվել է, պարսկահպատակ Սիմօն Մելիքեանցին ձերբակալել են և տարել են կոմենդանտային վարչութիւնը։

—

Մօտ օրերս Բագւում պատրաստի հագուստեղէնի փակված խոշոր խանութների տէրերը շրջել են փոքր խանութները, որոնց տէրերը չէին ցանկացել փակել և շարունակել էին առևտուրը և պահանջել են, որ բոլոր փոքր խանութները փակվեն, որպէսզի պահպանվի վրիվին ընդհանուր միութիւնը։ («Баку»)

—

Մօտ ապագայում Փոթիում կը սկսէ հրատարակվել ռուսերէն մի ամենօրեայ լրագիր «Приріонскій Край» անունով։

—

Հոկտեմբերի 15-ի գիշերը կալանաւորվել է Պետերբուրգի համալսարանի ուսանող Խուդադովը, որ ուսանողների խորհրդի անդամն է։

—

Կառավարիչ սենատի 2-րդ դեպարտամենտի օբեր-պրոկուրորի օգնական Ա. Լէոնտիէվը չը կամենալով ենթարկվել պրեմիէրի յայտնի շրջաբերականին, որով սահմանափակվում է պետական ծառայութեան մէջ եղողների քաղաքական ազատութիւնը, հրաժարվել է իր պաշտօնից և գրվել է Պետերբուրգի պալատի շրջանի երդուեալ-հաւատարմատարների անդամ։

—

Պրոֆեսսոր Լ. Աուէրը, որ 34 ամբողջ տարի է ծառայում է կրթական գործին, հրաժարական է տուել։

—

Կաղան քաղաքը իր շրջակայքով ուժեղացրած պահպանութեան տակ է դրվում մի տարի ժամանակով։

—

«Ռուս ժողովրդի միութեան» անդամների մի խումբ մօտ օրերս Պետերբուրգում դասախօսութիւն է կարդացել գորոդօվոյների 3-րդ վաշտում, որից յետոյ սև-հարիւրեակային կոչեր է ցրել։ Ընթերցանութիւնը կատարվել է ոստիկանական աւագ պաշտօնեայի ներկայութեամբ։ Վերջինիս կարգադրութեամբ էլ իբրև շնորհակալութիւն ձեռքերի վրա են առել և ճօճել դասախօս այցելուներին։ Այդպիսի դասախօսութիւններ կարդացվել են ոստիկանական և ուրիշ կայարաններում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ Քաղաքային դուման, քննելով քաղաքային յայտարարագիրը, որը ուղղված է վարչութեան նախագահի ունունով,—քաղաքային դումայի կազմից հեռացնելու ձայնաւոր Կէդրինին և Միխայիլ Պետրունկևիչին, որոնք ստորագրել են Վիբորգի կոչը,—համաձայնեց դումայի և իրաւաբանական մասնաժողովների որոշումների հետ հեռացնելու վերոյիշեալ ձայնաւորներին քաղաքային դումայի կազմից, բայց առանց նրանց տեղերը ուրիշներով փոխարինելով, մինչև դատարանի վճիռը, որը կը որոշէ նրան մեղաւորութեան աստիճանը։

ԼՕԶԱՆՆԱ, 20 հոկտեմբերի։ Դաշնակցական խորհուրդը քննեց Գիւգօ և Սոբիտոմատէրա իրաւաբանների յայտնագիրը, որի մէջ ասված է, որ ռուսական դեսպանատունը պահանջում է իրան յանձնել Ժընէվում կալանաւորված 3 վրացիներին, որոնք մեղադրվում են Դուշէթի գանձարանի կողոպտման մէջ։ Դաշնակցական խորհրդը անհրաժեշտ գտաւ պարզաբանելու այն հարցը, թէ արդեօք ինչպիսի հիմնարկութիւն է կողոպտված, յանցանքը ինչ տեսակ բնաւորութիւն ունի, կատարված է արդեօք յեղափոխութեան ժամանակ, կողոպուտը կազմակերպելու մէջ յեղափոխականները մասնակցել են,—յայտարարվեցին կողոպտված փողերը քաղաքական նպատակների համար։ Ժընէվ է ուղարկված մի առանձին մասնաժողով բանտում հարցաքննելու մեղադրեալներին։

ՆԻՒ-ԵՈՐԿ, 21 հոկտեմբերի։ Լաբրադորում գտնված Փոֆէնտալից ստացված տեղեկութիւնների համաձայն, բևեռները հետազօտող Ռոբէրտ Բէրի յետ է վերադարձել առանց հասնելու բևեռին։ Բէրուն միմիայն յաջողվել է բարձրանալ ամենահիւսիսային կէտի հիւսիսային լայնութեան 88°-ին։

ԼՈՆԴՕՆ, 21 հոկտեմբերի։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, համայնքների պալատի ընտրութիւնների ժամանակ Լօնդօնի շրջանի կազմից ընտրված են 918 պահպանողականներ, 254 առաջադիմականներ, 97 անկախներ, 32 բանւորական կուսակցութիւնից, և մէկ սօցիալիստ։ Շատ տեղերում լիբերալները և ունիօնիստները միասին էին ձայն տալիս բանւորական կուսակցութեան հակառակ։

ԿՐՕՆՇՏԱԴՏ, 21 հոկտեմբերի։ Զինուորական-ծովային դատարանը, «Слава» զրահակրի 26 նաւաստիների գործի առիթով, որոնք մեղադրվում էին ապստամբութեան և իրանց հրամանատարին չը հնազանդվելու մէջ, յուլիսի 4-ին դատապարտեց 15 նաւաստիներին կալանաւորական բաժանմունքները 9 (?) (հեռագիրը բաց է թողված)։

ՊԵՐՄ, 21 հոկտեմբերի։ Կունջուրից վեց վերստ հեռաւորութեան վրա կողոպտված է պօստը. տարված է 4000 ռուբլի։

ՄԱԼԱԳԱ, 21 հոկտեմբերի։ Ժամանեց անգլիական էսկադրան։

ԻՒՐԻԷՎ, 21 հոկտեմբերի։ Իւրիէվից մի քանի վերստ հեռաւորութեան վրա կողոպտվեց արքունական գինետների հարկահան Կուզնէցովը։ Տարված է 10,000 ռուբլի։

ԵԱՐՕՍԼԱՒ, 21 հոկտեմբերի։ Վօլգայում սառոյցը երևան եկաւ։

22 հոկտեմբերի

ՍԱՐԱՏՕՎ, 21 հոկտեմբերի։ Նահանգական ազնուականների ժողովում մի ազնուական ներկայացրեց մի զեկուցում, որի մէջ ասվում է, որ դատաստանական վարչութիւնը միշտ իր կոչման բարձրութեան վրա չէ կանգնում, և մատնանշում է, որ երդուեալ հաւատարմատարների դատարաններում թոյլատրվում է կալուածքների պօգրօմների փառաբանութիւններ և կոչ դէպի պօգրօմային գործողութիւնները։ Ժողովը որոշեց ընտրել մի մասնաժողով մանրամասն պարզելու համար դատաստանական վարչութիւնների վերաբերմունքը վերոյիշեալ գործերին։

ԿԱԶԱՆ, 21 հոկտեմբերի։ «Русское Слово»-ի հաղորդած հեռագիրը, որ իբր թէ ուսանող Տանէվան յանձնված է զինուորական-դաշտային դատարանին, հնարովի է։

ՆԻԿՕԼԱԵՎ, 21 հոկտեմբերի։ Նիկօլաևսկի ծովային վարչութիւնը ջուրը իջեցրեց «Св. Евстафій» զրահակիրը, որը կառուցված է «Пантелеймонъ» զրահակրի տիպով. մեծութիւնը 12,840 տօնն է։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 21 հոկտեմբերի։ Քաղաքի մօտ՝ ծովային բանտի պետ Լիտվօնովի վրա երկու անգամ կրակեցին, բայց անաջող։ Չարագործները անյայտացան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ Համալսարանում ակադեմիստների ժողովը վճռեց պրօֆէսսօրների խորհրդին դիմել մի մանրամասն ծանուցագրով, որը կը դատապարտէ ընտրված ստարօստաների գործունէութեան եղանակները և կը յայտարարէ, որ ակադեմիական միութեան անդամները համալսարանում զբաղմունքները չեն դադարեցնի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ (Պաշտօնական)։ Ներքին գործերի մինիստրը հոկտեմբերի 21-ին ուղարկել է նահանգապետներին և քաղաքապետներին հետևեալ հրամանագիրը. «Մի քանի հիմնարկութիւններ, որոնք կազմում են ընտրողական ցուցակները, կասկածանքի են հանդիպում նրա մէջ, թէ արդեօք յայտարարվելու ընտրողական ցուցակների մէջ կարելի՞ է մտցնել այն անձանց, որոնք յիշված են 3-րդ յօդուածի մէջ, որը հաստատուած է հոկտեմբերի 9-ին ներքին գործերի մինիստրի կողմից՝ այն ենթադրելով, որը 1905 թուի դեկտեմբերի 11-ի բարձրագոյն ուկազի հիման վրա մտցվել են արդէն լրացուցիչ ցուցակների մէջ. կամ այդ անձանց վերաբերմամբ յամենայն դէպս հարկաւոր է քննել և ստուգել նրանց ընտրութիւններին մասնակցելու իրաւունքը։ Այս պատճառով պատիւ ունիմ խնդրելու ձեզ բացատրել այն հիմնարկութիւններին, որոնք կազմելու են ընտրողական ցուցակները, որ այն անձինք, որոնք իրանց բնակած բնակարանների իրաւունքով իրաւունք ունեն մասնակցելու ընտրութիւններին և որ իրանց բնակած բնակարանի համար չեն վճարում բնակարանային պետական տուրք կամ իրանց կալուածքի կառավարութեան և հողի կապալի համար (բարձրագոյն ուկազ փետրվարի 11-ին 1905 թ. յօդ. 1, 2. գլ. 5, յօդ. 3)։ Եթէ նրանք արդէն մտծված են լրացուցիչ ցուցակների մէջ, որոնք կազմվեցին ապագայ ընտրութիւնների համար, պէտք է մտծվեն ընդհանուր ընտրողական ցուցակներ մէջ, որոնք կը հրատարակվեն, առանց նրանց կողմից խնդրատուոյց լինելու, ինքնըստինքեան հասկանալի է, միայն այն պայմաններում, որ նրանք պատկանում են այն անձանց թւին, որոնք իրաւունք չունեն մասնակցելու քաղաքային թաղամասերի ընտրութեանն, կամ գաւառական հողատէրերի համագումարին և քաղաքային ընտրողներին մասնակցել և երբոր նրանք ընտրութիւններին կը մասնակցեն որպէս բնակարան վարձողների իրաւունքով, որովհետև կապալառուները և կալուածքների կառավարիչները չեն կորցրել նախընթաց ցուցակների յայտարարելուց առաջ ընտրողական իրաւունքը։ Այս բանը աչքի առաջ ունենալով խնդրում եմ ձեզ առաջարկել վարչութիւններին յայտարարվելիք ընտրողական ցուցակների միջից հանել այն մարդկանց, որոնք սխալմամբ մտցրվել են ցուցակների մէջ, ինչպէս և այն մարդկանց, որոնք ինչ-ինչ պատճառներից կորցրին իրանց ցենզը, որովհետև ընտրութիւններին մասնակցելու նրանց իրաւունքը ապացուցված չէ։ Այս բոլոր պարագաներում հէնց շահագրգռված անձերից է կախված ընտրողական ցուցակներ կազմող վարչութեանը ներկայացնել ընտրութիւններին մասնակցելու իրանց ունեցած ապացոյցները, սրա հետ միասին, եթէ իրանց անունները չը մտծվեցին ընտրողական ցուցակների մէջ, կարող են դիմել համապատասխան բողոքագրով Պետական Դումայի ընտրութիւնները կառավարող մասնաժողովին, որը քննելով հանգամանօրէն բողոքողի խնդիրը և գտնելով նրան իրաւացի կարող է մտծել ընտրողական ցուցակների մէջ (կանոնադրութիւն ընտրութիւնների մասին. յօդ. 34, 35, 37)։

ԲԵՐԼԻՆ, 21 հոկտեմբերի։ Այսօրվանից Ռուսաստանի ուսանողներին նորից թոյլատրվեց յաճախել պրուսական համալսարանները. բացի քաղաքական հաւատարմութեան վկայաթղթից, պահանջվում են նոյնպէս ներկայացնել նիւթական ապահովութեան և կլասսիքական գիմնազիայի աւարտման վկայականները։

ՄՕՍԿՎԱ, 21 հոկտեմբերի։ Չը նայած որ համալսարանը փակ է, բայց այնուամենայնիւ պետական քննութիւնները քննիչ մասնաժողովներում իրանց կարգով ընթանում են։ Համալսարանի ռեկտօրը հաստատ կերպով կանգնած է իր վճռի վրա թոյլ չէ տալիս ոչ մի ուսանողական ժողով համալսարանի շինութեան մէջ և մինչև անգամ ուսանողական կենտրոնական օրգանի ժողովը։

ՊԱՐԻԶ, 21 հոկտեմբերի։ Նախագահ Ֆալիէրը ստորագրեց մի օրինագիծ, որով հարաւային երկաթուղային ճանապարհները պետութեան կողմից գնվում են, և վերացվում է մահվան պատիժը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 21 հոկտեմբերի։ Զինուորական դատարանի նիստը՝ գեներալ Նեպլիւևայի կեանքի դէմ կատարված մահափորձի գործի առիթով թագաւորական տօնի պատճառով յետաձգեց։ Մեղադրեալներից 4-ը մեղադրվում են գեներալ Նեպլիւևի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ, որի ժամանակ սպանվեցին և վիրաւորվեցին շատ մարդիկ։ Պաշտպանում են մեղադրեալներին Վալավինսկին, Ժդանովը և իշխան Անդրոնիկովը. դատավարութիւնը տեղի է ունենում դռնփակ։

23 հոկտեմբերի

ՄՕՍԿՎԱ, 22 հոկտեմբերի։ Մի ոմն Եկկինդ Հիւսիսային բանկից կեղծ չէկով ստացաւ 35,000 ռուբլի։ Չարագործը բռնվեց և խոստովանեց, բայց փողերի տեղը չը յայտնեց։ Փողերը փնտռվում են։

ՎԼԱԴԻՄԻՐ, 22 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 18-ին տեղական բանտի տաժանակիրները, որոնց մեծամասնութիւնը Սվէաբորգի նաւաստիներից էր, կապոտեցին պահապաններին և կամեցան խլել զէնքերը և ազատել 200 բանտարկվածների։ Պահապաններից մէկը կարողացաւ դուրս փախչել, իբրանցում ձգեց, որից և զօրքը վրա հասաւ։ Բանտարկեալները շղթայակապվեցին։

ՄԻՆՍԿ, 22 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 17-ի գիշերը Իշկօլցում թալանելու նպատակով կատարված է գազանային սպանութիւն. սպանված են Լեանդօ ամուսինները և սրանց մօտ հիւր գտնվող օրիորդ Ուժանսկին։ Չարագործութիւնը թագցնելու համար կողոպտիչները դիակները նաւթով այրեցին։ Չարագործները գտնված չեն, բայց կասկածանքներ կան։

ԲԵՐԼԻՆ, 22 հոկտեմբերի։ Անթել հեռագրի կոնֆերենցիայում ստորագրված է կոնվէցիա Աւստրիայի, Արգենտայի, Բելգիայի, Ունգարիայի, Մեծ-Բրիտանիայի, Գերմանիայի, Յունաստանի, Դանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Մեքսիկայի, Մօնակօի, Նորվեգիայի, Նիդէրլանդիայի, Պարսկաստանի, Իսպանիայի, Ռուսաստանի, Ռումինիայի, Միացեալ-Նահանգների, Թիւրքիայի, Ուրուգվայի, Ֆրանսիայի, Չիլիի, Շվեցիայի և Եապօնիայի ներկայացուցիչների կողմից։ Համաձայնութեան ամենագլխաւոր հարցը նրանում է կայանում, որ ծովային կայարաններից և նաւերից անթել հեռագիրը գործածութեան ժամանակ պէտք է տեղի ունենան առանց արգելքների, ուշ չը դարձնելով անթել հեռագրի սիստեմի վրա։ Միացեալ-Նահանգների առաջարկութեամբ լրացուցիչ համաձայնութիւն կայացաւ նաւերի պարտաւորեցուցիչ հաղորդակցութիւնը իրար հետ։ Վերոյիշեալ համաձայնութիւնը ստորագրեցին յիշեալ պետութիւնները, բացառութեամբ Բուլղարիայի, Մեծ-Բրիտանիայի, Իտալիայի, Մեքսիկայի, Պարսկաստանի, Պորտուգալիայի և Եապօնիայի։ Երկու համաձայնութիւնների գործածութեան մէջ են մտնում 1908 թուի օգոստոսի 1-ից։ Հետևեալ կոնֆէրենցիան նշանակված է 1910 թւին Լօնդօնում։

ՊԱՒԼՈՎՕ-ԳԻՒՂ, 22 հոկտեմբերի։ Գորբատովսկի նահանգի Պանինօ գիւղի մօտ հոկտեմբերի 20-ին սպանված է արքունական գինետների հարկահան Կուպրանով։ Դիակը գտնված է սայլակի մէջ, կառապանը սպանված է։ Հարկահանի մօտ ենթադրվում է, որ 1000 ռուբլուց աւելի չը կար։

ԿԱԶԱՆ, 22 հոկտեմբերի։ Բանտային տեսչի հաղորդած տեղեկութիւնների համաձայն, հոկտեմբերի 20-ին Չիստօպօլսկի բանտում անկարգութիւններ տեղի ունեցան. քրէական յանցաւորները չը կամենալով էտապով գնալ, ջարդեցին իրանց սենեակների դռները և փակեցին ճանապարհները։ Իսպրավնիկը ստրաժնիկներ բերեց։ Ստրաժնիկները կրակեցին։ Կալանաւորներից մէկը վիրաւորվեց, սպանվածներ չկան։ Բանտում կարգը վերահաստատվեց։

ՎԱՐՇԱՎԱ, 22 հոկտեմբերի։ Երեկոյեան Դօբրոյ և Բէզնարսկի փողոցի անկիւնում գտնված գարեջրատունը մտան մի քանի մարդիկ մասգործ Ֆիլինսկի հետ։ Մի քանի րոպէից յետոյ չարագործները սպանեցին բրաունինգներով Ֆիլինսկուն և անհետացան։ Այդտեղից ոչ հեռու բացվեց սօցիալիստ-յեղափոխականների բնակարանը։ Բռնված են անհագին (?) քանակութեամբ մաուզէրներ և բրաունինգներ։ Կալանաւորված են 4 հոգի։

ՎԵԱԶՆԻԿԻ, 22 հոկտեմբերի։ Պլօցկով գիւղում երկու նորակոչ զինուորներ սկսեցին վիճել քաղաքականութեան մասին, նրանցից մէկը դանակով միւսին մահացու կերպով վիրաւորեց։ Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնվեց անլեգալ գրականութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 հոկտեմբերի։ Վառելանիւթի մասին տեղի ունեցած ժողովում բագուի բանուորների կողմից եկած 8 ներկայացուցիչները մանրամասն կերպով բնորոշեցին նաւթահանքերում բանւորների ծանր պայմանները և բնակավայրերը, համանաւանդ նրանք շեշտեցին տանելի բնակարանների և բանւորական կազմակերպութիւնների բացակայութեան վրա։ Նրանք յայտնեցին, որ իրանք խոստովանում են, որ գործադուլները քանդում են երկրի արդիւնաբերական ույժը, բայց բանւորական շարժումները Բագւում չեն դադարի, որովհետև նա լաւ ապագայի ձգտման միակ միջոցն է։ Խորհուրդը անհրաժեշտ գտաւ բանւորների համար լաւ բնակարաններ տալ. դրանց համար պէտքական հողերի մի մասը գանձարանը կը տայ, իսկ միւս մասը կը գնվի գիւղացի-հողատէրերից ծովային վարչութեան և Բիբի-Էյբաթի հողային մասերից։ Կազմակերպութիւնների և բնակարանների վերաբերեալ հարցերը, քննութեան կանչվեն վաղը։

ՇԱՆԽԱՅ, 22 հոկտեմբերի։ Միսսիօներների հաղորդած տեղեկութիւնների համաձայն, Կեանֆուրի շրջանի հիւսիսային մասում սով է տիրում, մօտ 10 միլիօն մարդ համարեա մահվան գրկում են գտնվում։ Իշխանութիւնը գաղթել չէ տալիս, միևնոյն ժամանակ օգնութեան չէ ձեռնարկում։ Անկարգութիւնները շարունակվում են։

ՌՈՒՄԱՆ, 22 հոկտեմբերի։ Ռումանի բերդապահ զօրքի մէջ ագիտացիա մղելու համար՝ Կիեւի պալատը 4 հոգու դատապարտեց իրաւունքներից զրկման և աքսորի։

ԵԱՐՕՍԼԱՎ, 22 հոկտեմբերի։ Պետական Դումայի նախկին պատգամաւոր Նեկրասովը, որը ստորագրել է Վիբորգի կոչը ուղարկվում է քննիչի մօտ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզաստ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերաբուժ. հ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ց. Գուրղենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօնսուլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Կենտրօնական գրավաճառանոցում
Թիֆլիսում, վաճառվում են Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի հետևեալ աշխատութիւնները
Մայրենի լեզու ա. տարի 32-րդ պատկերազարդ տպ. գինն է 25 կ.։
» » բ. տ. 21-րդ, պատկերազարդ տպ. գ. 40 կ.։
» » գ. տ. 15-րդ տպ. գ. 50 կ.։
» » դ. տ. 12-րդ տպ. գ. 55 կ.։
Մայրենի լեզուի քերականութիւն 6-րդ տպ. գ. 50 կ.։
Հայորդի Սրբազ. Պատմ. հին կտակ. գ. 35 կ.
» » Նոր կտակարան գ. 35 կ.։
Հէնչելի բանաւոր և գրաւոր հաշուելի թուաբանական խնդիրներ և օրինակներ ա. և երկ. տ. դասընթացք 6-րդ տ. գ. 35 կ.։
Նոյնը երրորդ տարվայ դասընթացք երրորդ տիպ. գինը 50 կ.։
Մանդինեան. Ս. Ազգային Ընտանեկան աշխարհ գ. 25 կ.։
Գումարով գնողներին սովորական զեղջում է լինում. Օտար տեղերից դիմել Въ Тифлисъ Центральной книжной торговля, արտասահմանից Librairie centrale à Tiflis։
ե. 7—10

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երեւանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երեւան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը).	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
3 ՌՈՒԲԼԻ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
3 ՌՈՒԲԼԻ
պատկերի երկրորդ էժանագին հրատարակութիւնը,
որի միակ նպատակն է հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր հայի ունենալ այդ ազգային նուիրական յիշատակը։
Ի նկատի ունենալով, որ այս նպատակին հասնելու գլխաւոր պայմանն է գնի էժանութիւնը, բացի այն, որ առաջի հրատարակութիւնից մնացած քարերը բաւականին էժանացնում են այս հրատարակութիւնը—վճռեցի բացառապէս միայն ինքս վաճառել և այն 25—30% օգուտը, որ պէտք է ստանային վաճառականները, զեղջել նախկին (5 ռուբ.) գնից և այսպիսով հասցնել գինը մինիմումի՝ այն է
3 ռուբլի ճանապարհածախսով։
Ինձ մօտ վաճառվում է նոյնպէս արծաթից շինված
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար.
Գինն է 3 ռուբլի ճանապարհածախսով։
Առանց կանխավճարի չէ ուղարկվում։
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
3 ՌՈՒԲԼԻ
3 ՌՈՒԲԼԻ
(ե. հ.կ.) 7—10

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
Սրանով պատիւ ունի յայտարարելու պ. պ. բաժնետէրերին, որ ամսիս 22-ին, չը կայացած արտակարգ ընդհանուր ժողովի փոխարէնը երկրորդ անգամ նշանակվում է ժողովը նոյն տեղը հոկտեմբերի 25-ին, չորեքշաբթի օրը երեկոյեան ժամ 7-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութեանը։
(ե.) 1—1

Մի հայ վարժուհի
ընդունում է իր մօտ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
և
ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ
տալիս է սենեակ, ճաշ և պարապում է։
Գները մատչելի են։
Հասցէն՝ հարցնել «Մշակի» խմբագրատանը։
Նոյն ընտանիքում տրվում է Ճ. Ա. Շ. 1—5

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՆԱՆԵԱՆՑ
Թիֆլիսում բացել եմ հին Շաղինովի № 47 սենեակում կօմիսիաներական գրասենեակ և ընդունում եմ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
յանձնարարութիւններ ամենամատչելի պայմաններով։
Նաև վաճառում եմ ՓՆՏՈՒՂ (ալիւր)
ԸՆԿՈՅԶ և ՇԱՄԱԼՈՒԹ
մէտօլներով կամ վագոններով։ Ամեն մի տեսակ պատուէր կատարվում է անմիջապէս։
(ե. կ.) 1—2

Էժանագին եւ մաքուր ճաշարանի
ԵՒ
ԹԷՅԱՐԱՆԻ
Ընկերութեան մասնաժողովը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել օրական մօտ 10 փութ թխած հաց մատակարարելու ընկերութեանը
Պայմանների մասին դիմել ընկերութեան նախագահ տ. Հեղինէ Աւթանդիլեանին՝ մինչև նոյեմբերի 4-ը ամեն օր ժամը 10—12-ը։
Հասցէն՝ Գրիբոյեդովսկի փող. տուն № 26.
(ե. հ. շ. կ.) 4—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“
Պատկեր հայ-թուրքական կռիւներից
(24 երես)
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրախանութներին։
ԳՈՒՄԱՐՈՎ ԶԵՂՉ
1—5

ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Գրասենեակին կից
Բացվել են
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
լեզուների դասընթացքները չափահասների և աշակերտների համար։ Ամսավճարն է 5 ռուբլի։ Դրվել՝ Պուշկինսկի փող. № 3 մուտքը մեծ դռնից III-րդ յարկ, 11—3 ժամը գերմաներէն լեզուի վարժուհի Օ. Վէյսի մօտ։
(ե.) 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին, պատրաստում է արուեստական ատամներ, փոկեր, քիթ և անդամահատված ծնօտների պրօթէզներ։
Ընդունելութեան ժամերը 9—2 առաւօտեան և 4—6 երեկոյեան։
Հասցէն՝ Վանքի և Բարօնսկի փողոցների անկիւն № 10։
(ա. օ.) 30—30

Գոնձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլավների հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարութինով
(ե. կ. ե.) 24—100

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ընտանիքի տէր, փնտռում է կանտօրշչիկի, պրիկազչիկի կամ թէ գրագրի
ՊԱՇՏՕՆ
Ունի լաւ երաշխաւորներ. դիմել՝ 1-ая Гончарная № 5, Теръ-Багдасарянцу.
(ե.հ.կ.) 2—5

Վօկզալի դիմաց «Востокъ» հիւրանոցի կողքին գտնվող Նիկոլայ Ցարութինեանի
ԽԱՐԱՋԻ արհեստանոցում
հարկաւոր են
խարազի բանուոր և սեդէլչիկ։
Ցանկացողները դիմեն վերոյիշեալ հասցէով։
3—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ա. Վ. ԴԱՆԻԷԼԵԱՆ
Ընդունում է դիմողներին
Հասցէն՝ Орловская 5. 3—5

Գ. Ե. ԱՒԱՐԳԻՍՕՎԻ
ԱՅԳԵՏՆԿԱՐԱՆԸ
բաց է թողնում պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսաց և կովկասեան տեսակի։
Հասցէն՝ կայարան Սկրա (ст. Скра зак. ж. д. Авсаркисову. Կատալօգը ուղարկվում է ձրի։
8—10

Փորձված Ուսուցչուհի
որոնում է ժամաւոր ԴԱՍԵՐ։
Հասցէն՝ «Մշակ»-ի խմբագրատանը։
6—10

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(կ.չ.ու.) 17—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ., կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն՝ Անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կաղանսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղանսկի փողոցից № 2.
(ա. օ.) 263—300

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5